

[▼B](#)

Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 2157/2001 (ԵՀ) կանոնակարգ
Եվրոպական ընկերության (Societas Europaea, SE) կանոնադրության մասին
(ՊՏ L 294, 10.11.2001թ., էջ 1)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	Էջ	Ամսաթիվ
<u>▶M1</u>	Խորհրդի 2004 թվականի ապրիլի 26-ի թիվ L 168 885/20047 (ԵՀ) կանոնակարգով		1	1.05.2004թ.
<u>▶M2</u>	Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի թիվ L 363 1791/2006 (ԵՀ) կանոնակարգով		1	20.12.2006թ.

[▼B](#)

Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 2157/2001 (ԵՀ) կանոնակարգ
Եվրոպական ընկերության (Societas Europaea, SE) կանոնադրության մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 308-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

Քանի որ

1) ներքին շուկայի ձևավորման գործընթացն ավարտին հասցնելը և դրական ազդեցությունը, որ այն ունենում է Համայնքի տնտեսական և սոցիալական իրավիճակի վրա, ենթադրում է, որ ոչ միայն առևտրի խոչընդոտները պետք է վերացվեն, այլ նաև արտադրության կառուցվածքները պետք է հարմարեցվեն Համայնքի շրջանակներին: Այս նպատակով կարևոր է, որ ընկերությունները, որոնց գործունեությունը նպատակաուղղված չէ միմիայն տեղական պահանջարկի բավարարմանը, կարողանան ծրագրել և իրականացնել իրենց գործունեության վերակազմակերպումը Համայնքի մակարդակով,

2) նման վերակազմակերպումը ենթադրում է, որ տարբեր անդամ պետություններում գործող ընկերություններն ունեն միաձուլումների միջոցով իրենց ներուժի միավորման հնարավորություն: Նման գործողություններ կարելի է իրականացնել՝ միայն պատշաճ կերպով պահպանելով Պայմանագրով սահմանված մրցակցության կանոնները,

3) տարբեր անդամ պետություններում գործող ընկերությունների վերակազմակերպման և համագործակցության գործողությունները հանգեցնում են իրավաբանական ու հոգեբանական բարդությունների և հարկային խնդիրների: Պայմանագրի 44-րդ հոդվածի հիման վրա ընդունվող հրահանգների միջոցով անդամ պետությունների ընկերությունների իրավունքի համապատասխանեցումը կարող է լուծել այս խնդիրների մի մասը: Այնուհանդերձ, նման համապատասխանեցումը ընկերություններին, որոնց գործունեությունը կարգավորվում է տարբեր իրավական համակարգերով, չի ազատում այնպիսի ընկերության ձև ընտրելու պարտավորությունից, որի գործունեությունը կարգավորվում է կոնկրետ ներպետական իրավունքով,

4) Համայնքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավական համակարգը դեռևս մեծապես հիմնված է ներպետական օրենքների վրա և, հետևաբար, այլևս չի համապատասխանում այն տնտեսական համակարգին, որի շրջանակում պետք է զարգանա՝ Պայմանագրի 18-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման անհրաժեշտությունից ելնելով: Այդ իրավիճակն էական խոչընդոտ է տարբեր անդամ պետություններում գործող ընկերությունների խմբերի ստեղծման համար,

5) անդամ պետությունները պարտավոր են ապահովել, որ սույն Կանոնակարգով եվրոպական ընկերությունների նկատմամբ կիրառվող դրույթները չհանգեցնեն եվրոպական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ չարդարացված անհավասար վերաբերմունքի հետևանքով առաջացող խտրականության կամ եվրոպական ընկերության ստեղծման կամ գտնվելու վայրի փոփոխման անհամաչափ սահմանափակումների,

6) անհրաժեշտ է հնարավորինս ապահովել Համայնքում բիզնեսի տնտեսական և իրավական բաղադրիչների համապատասխանությունը: Այդ նպատակով ընկերությունների կողքին, որոնց գործունեությունը կարգավորվում է որոշակի ներպետական իրավունքով, պետք է ապահովվի Համայնքի բոլոր անդամ պետություններում անմիջականորեն գործող կանոնակարգով սահմանված իրավական նորմերի համաձայն ստեղծված և գործունեություն իրականացնող ընկերությունների ստեղծումը,

7) այդ կանոնակարգի դրույթները թույլ կտան ստեղծել և կառավարել եվրոպական ուղղվածությամբ ընկերություններ, որոնք զերծ կլինեն ներպետական ընկերությունների իրավունքի անհամապատասխանությունից և սահմանափակ տարածքային կիրառումից բխող խոչընդոտներից,

8) սահմանափակ պատասխանատվությամբ եվրոպական բաց ընկերության (այսուհետ՝ Եվրոպական ընկերություն) Կանոնադրությունը շուկայի ձևավորման գործընթացն ավարտելու վերաբերյալ Հանձնաժողովի Սպիտակ փաստաթղթում ներառված և մինչ 1992 թվականը Խորհրդի կողմից ընդունման ենթակա ակտերից մեկն է, որը հաստատվել է 1985 թվականի հունիսին Միլանում կայացած Եվրոպական խորհրդի հանդիպման ժամանակ: 1987 թվականին Բրյուսելում կայացած հանդիպման ժամանակ Եվրոպական խորհուրդը ցանկություն հայտնեց, որպեսզի այդպիսի Կանոնադրությունն ստեղծվի անհապաղ,

9) սահմանափակ պատասխանատվությամբ եվրոպական բաց ընկերության կանոնադրության մասին կանոնակարգի ընդունման առնչությամբ Հանձնաժողովի կողմից 1970 թվականի առաջարկը, փոփոխված 1975 թվականին, ներկայացնելուց ի վեր, ընկերությունների ներպետական իրավունքի համապատասխանեցման գործում էական առաջընթաց է գրանցվել, այնպես, որ այն հարցերի շուրջ, որոնց դեպքում եվրոպական ընկերության գործունեության համար անհրաժեշտ չեն Համայնքի միասնական կանոններ, կարելի է հղում կատարել ընկերության գտնվելու վայրի անդամ պետության՝ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների գործունեությունը կարգավորող իրավունքին,

10) չսահմանափակելով ապագայում առաջացող տնտեսական որևէ իրավիճակ հաշվի առնելու անհրաժեշտությունը, եվրոպական ընկերության գործունեությունը կարգավորող իրավական նորմերի ստեղծման առանցքային նպատակի իրականացումն ապահովելու համար պետք է հնարավոր լինի առնվազն ստեղծել նման ընկերություն՝ որպես տարբեր անդամ պետությունների ընկերությունների միաձուլմանը կամ հուլիինգային ընկերության ստեղծմանը և տնտեսական գործունեություն իրականացնող և տարբեր անդամ պետությունների իրավունքով կարգավորվող ընկերություններին և այլ իրավաբանական անձանց համատեղ դուստր ձեռնարկությունների ստեղծմանը օժանդակող միջոց,

11) նույն համատեքստում, սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունը, որի գտնվելու վայրն ու գլխավոր գրասենյակը Համայնքի տարածքում է, պետք է հնարավորություն ունենա առանց լուծարման վերափոխվելու եվրոպական ընկերության՝ պայմանով, որ այն ունի իր գտնվելու վայրի անդամ պետությունից բացի այլ անդամ պետությունում գտնվող դուստր ձեռնարկություն,

12) արժեթղթերի ազատ վաճառք իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և արժեթղթերով գործարքների նկատմամբ կիրառվող ներպետական դրույթները պետք է կիրառվեն նաև այն դեպքում, երբ եվրոպական ընկերությունը ստեղծվում է արժեթղթերի ազատ վաճառքի միջոցով, ինչպես նաև նման ֆինանսական գործիքներն օգտագործելու ցանկություն ունեցող եվրոպական ընկերությունների նկատմամբ,

13) եվրոպական ընկերությունն ինքը պետք է լինի կանոնադրական կապիտալով ընկերություն, քանի որ ֆինանսավորման և կառավարման տեսանկյունից եվրոպական հարթությունում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ընկերության համար դա ամենահարմար ձևն է: Որպեսզի այդ ընկերությունները համապատասխան չափեր ունենան, պետք է սահմանվի

կապիտալի նվազագույն չափ՝ ակտիվների բավարար առկայությունն ապահովելու համար, որը, սակայն, չպետք է խոչընդոտի փոքր և միջին կազմակերպություններին՝ ստեղծելու եվրոպական ընկերություններ,

14) եվրոպական ընկերությունը պետք է արդյունավետորեն կառավարվի և պատշաճ կերպով վերահսկվի: Պետք է հաշվի առնել, որ ներկայումս Համայնքում գործում է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների կառավարման երկու տարբեր համակարգ: Չնայած եվրոպական ընկերությունը պետք է հնարավորություն ունենա ընտրություն կատարելու այդ երկու համակարգի միջև, կառավարման և վերահսկման համար պատասխանատուների համապատասխան պարտականությունները պետք է հստակորեն սահմանվեն,

15) միջազգային մասնավոր իրավունքի նորմերի և ընդհանուր սկզբունքների համաձայն, երբ ընկերությունը վերահսկում է ընկերության, որի գործունեությունը կարգավորվում է այլ իրավական համակարգով, այդ վերահսկողությունից բխող՝ փոքրամասնություն կազմող բաժնետերերի և երրորդ անձանց պաշտպանությանն առնչվող նրա իրավունքները և պարտականությունները կարգավորվում են վերահսկվող ընկերության վրա տարածվող իրավունքով՝ չսահմանափակելով վերահսկող ընկերության վրա տարածվող իրավունքով սահմանված պարտականությունները, ինչպես օրինակ, համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմելու պահանջը,

16) չսահմանափակելով անդամ պետությունների իրավական նորմերի հետագա համաձայնեցման հետևանքները՝ այս բնագավառում եվրոպական ընկերության նկատմամբ կիրառվող հատուկ կանոններ ներկայումս չեն պահանջվում: Այդ պատճառով, միջազգային մասնավոր իրավունքի նորմերը և ընդհանուր սկզբունքները պետք կիրառվեն և՛ երբ եվրոպական ընկերությունը վերահսկող, և՛ երբ այն վերահսկվող ընկերությունն է,

17) այլ կազմակերպության կողմից վերահսկվող եվրոպական ընկերության նկատմամբ կիրառվող կանոնը պետք է հստակեցվի, և այս նպատակով հղում պետք է կատարվի վերջինիս գտնվելու վայրի անդամ պետությունում գործող սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների գործունեությունը կարգավորող իրավական նորմերին,

18) սույն Կանոնակարգի դրույթների խախտման դեպքում յուրաքանչյուր անդամ պետություն պետք է պարտավորված լինի կիրառել այն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ կիրառվող պատժամիջոցներ, որոնց գործունեությունը կարգավորվում է իր իրավունքով,

19) եվրոպական ընկերությունում աշխատողներին ընդգրկելու կանոնները սահմանված են 2001/86/ԵՀ(4) հրահանգով, և այդ դրույթներն այդպիսով կազմում են սույն Կանոնակարգի անբակտելի լրացումը և պետք է կիրառվեն զուգահեռաբար,

20) սույն Կանոնակարգը չի կարգավորում իրավունքի այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են հարկումը, մրցակցությունը, մտավոր սեփականությունը կամ անվճարունակությունը: Անդամ պետությունների իրավունքի և Համայնքի իրավունքի դրույթներն այսպիսով կիրառվում են վերը նշված և սույն Կանոնակարգով չկարգավորվող այլ ոլորտներում,

21) 2001/86/ԵՀ հրահանգը մշակված է՝ ապահովելու աշխատողների ընդգրկումը տվյալ եվրոպական ընկերության գործունեության վրա ազդող հարցերի և որոշումների լուծմանը: Սոցիալական և աշխատանքային օրենսդրության հետ կապված այլ հարցեր, մասնավորապես, անդամ պետություններում սահմանված՝ աշխատողների տեղեկատվություն և

խորհրդատվություն ստանալու իրավունքը, կարգավորվում են սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ նույն պայմաններով կիրառվող ներպետական դրույթներով,

22) սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը պետք է հետաձգվի, որպեսզի յուրաքանչյուր անդամ պետություն կարողանա 2001/86/ԵՀ հրահանգի դրույթները ներառել իր ներպետական իրավունքի մեջ և նախօրոք մշակել այն եվրոպական ընկերության ստեղծման և գործունեության համար անհրաժեշտ մեխանիզմ, որի գտնվելու վայրը տվյալ անդամ պետության տարածքում է՝ այնպես, որ Կանոնակարգը և հրահանգը կիրառվեն զուգընթաց,

23) ընկերությունը, որի գլխավոր գրասենյակը Համայնքում չի գտնվում, սակայն ստեղծվում է անդամ պետության իրավունքին համապատասխան, գտնվելու վայրը տվյալ անդամ պետությունում է, ինչպես նաև իրական և երկարաժամկետ կապեր ունի անդամ պետության տնտեսության հետ, պետք է հնարավորություն ունենա մասնակցելու եվրոպական ընկերության ստեղծմանը՝ «Հիմնադրման ազատության սահմանափակումները վերացնելու մասին» 1962 թվականի Ընդհանուր ծրագրով սահմանված սկզբունքների համաձայն: Նման կապ առկա է հատկապես, երբ ընկերությունը տվյալ անդամ պետությունում գործունեության իրականացման վայր ունի և այնտեղից գործարքներ է իրականացնում,

24) եվրոպական ընկերությունը պետք է իր գտնվելու վայրը մեկ այլ անդամ պետություն տեղափոխելու հնարավորություն ունենա: Տեղափոխմանը դեմ հանդես եկող փոքրամասնություն կազմող բաժնետերերի, պարտապանների և այլ իրավատերերի շահերի պատշաճ պաշտպանությունը պետք է համաչափ լինի: Տեղափոխումը չպետք է շոշափի մինչև տեղափոխումը ծագած իրավունքները,

25) սույն Կանոնակարգը չի սահմանափակում որևէ դրույթի գործողությունը, որը կարող է ներառվել 1968 թվականի Բրյուսելի կոնվենցիայում կամ այդ կոնվենցիան փոխարինող անդամ պետության կամ Խորհրդի կողմից ընդունվող որևէ տեքստում, որը վերաբերում է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության գտնվելու վայրը մեկ անդամ պետությունից մյուսը տեղափոխվելու դեպքում կիրառվող ընդդատության կանոններին,

26) ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորվում է հատուկ հրահանգներով, և դրանք կիրարկող ներպետական իրավունքն ու այդ գործունեությունը կարգավորող լրացուցիչ ներպետական կանոնները լիովին կիրառելի են եվրոպական ընկերության նկատմամբ,

27) հաշվի առնելով եվրոպական ընկերության համայնքային հատուկ բնույթը՝ սույն Կանոնակարգով եվրոպական ընկերության նկատմամբ կիրառվող «կառավարման իրական վայր»-ի («real seat») վերաբերյալ կարգավորումները չեն հակասում անդամ պետությունների իրավունքին և գերակայություն չունեն ընկերությունների իրավունքին առնչվող՝ Համայնքում ընդունված այլ տեքստերի նկատմամբ,

28) 308-րդ հոդվածով սահմանված լիազորություններից բացի՝ Պայմանագիրը սույն Կանոնակարգի ընդունման համար այլ լիազորություններ չի նախատեսում,

29) մինչդեռ վերը նշված՝ նախատեսված միջոցների նպատակները չեն կարող պատշաճ կերպով իրականացվել անդամ պետությունների կողմից, քանի որ սահմանափակ պատասխանատվությամբ եվրոպական բաց ընկերությունն ստեղծվում է եվրոպական մակարդակով, և, հետևաբար, կարող են, այդ ընկերության չափի և ազդեցության պատճառով, ավելի լավ իրականացվել Համայնքի մակարդակում, Համայնքը կարող է ձեռնարկել միջոցներ,

որոնք համապատասխանում են Պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված սուբսիդիարության սկզբունքին: Համաձայն նշված հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի՝ սույն Կանոնակարգը դուրս չի գալիս տվյալ նպատակների իրագործման համար անհրաժեշտ շրջանակներից,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

1. Համայնքի տարածքում կարող է ստեղծվել սահմանափակ պատասխանատվությամբ եվրոպական բաց ընկերության ձևով ընկերություն (Societas Europaea կամ SE)՝ սույն Կանոնակարգով սահմանված պայմաններով և կարգով:
2. Եվրոպական ընկերության կանոնադրական կապիտալը բաժանվում է բաժնեմասերի: Յուրաքանչյուր բաժնետեր պատասխանատու է միմիայն իր ներդրած գումարի չափով:
3. Եվրոպական ընկերությունն օժտված է իրավասուբյեկտությամբ:
4. Եվրոպական ընկերությունում աշխատողներին ընդգրկելը կարգավորվում է 2001/86/ԵՀ հրահանգով:

Հոդված 2

1. I հավելվածում նշված սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունները, որոնք ստեղծվել են անդամ պետության իրավունքի համաձայն և դրանց գտնվելու վայրը և գլխավոր գրասենյակը Համայնքի տարածքում է, կարող են եվրոպական ընկերություն ստեղծել միաձուլման միջոցով, եթե դրանցից առնվազն երկուսի գործունեությունը կարգավորվում է տարբեր անդամ պետությունների իրավունքով:
2. II հավելվածում նշված սահմանափակ պատասխանատվությամբ բաց և փակ ընկերությունները, որոնք ստեղծվել են անդամ պետության իրավունքի համաձայն և որոնց գտնվելու վայրը և գլխավոր գրասենյակները Համայնքի տարածքում են, կարող են նախաձեռնել եվրոպական հոլդինգային ընկերության ստեղծումը, եթե՝

ա) առնվազն երկուսից յուրաքանչյուրի գործունեությունը կարգավորվում է այլ անդամ պետության իրավունքով, կամ

բ) առնվազն երկուսից յուրաքանչյուրն առնվազն երկու տարի ունեցել է դուստր ընկերություն, որի գործունեությունը կարգավորվել է այլ անդամ պետության իրավունքով, կամ՝ մասնաձյուղ այլ անդամ պետությունում:

3. Պայմանագրի 48-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով ընկերություններն ու ֆիրմաները և հանրային ու մասնավոր իրավունքով կարգավորվող այլ իրավաբանական անձինք, որոնք ստեղծվել են համաձայն անդամ պետության իրավունքի և, որոնց գտնվելու վայրը ու գլխավոր գրասենյակները Համայնքի տարածքում են, կարող են եվրոպական դուստր ընկերություն ստեղծել՝ ձեռք բերելով դրա բաժնետոմսերը, եթե

ա) առնվազն երկուսից յուրաքանչյուրի գործունեությունը կարգավորվում է այլ անդամ պետության իրավունքով, կամ

բ) առնվազն երկուսից յուրաքանչյուրը առնվազն երկու տարի ունեցել է դուստր ընկերություն, որի գործունեությունը կարգավորվել է այլ անդամ պետության իրավունքով, կամ՝ մասնաձյուղ այլ անդամ պետությունում:

4. Անդամ պետության իրավունքի համաձայն ստեղծված սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի գտնվելու վայրը և գլխավոր գրասենյակը Համայնքի տարածքում են, կարող է ձևափոխվել եվրոպական ընկերության, եթե այն առնվազն երկու տարի ունեցել է դուստր ընկերություն, որի գործունեությունը կարգավորվել է այլ անդամ պետության իրավունքով:

5. Անդամ պետությունը կարող է նախատեսել, որ Համայնքի տարածքում գլխավոր գրասենյակ չունեցող ընկերությունը կարող է մասնակցել եվրոպական ընկերության ստեղծմանը, եթե այդ ընկերությունն ստեղծվել է՝ համաձայն անդամ պետության իրավունքի, դրա գտնվելու վայրն այդ անդամ պետությունում է և իրական ու երկարաժամկետ կապեր ունի անդամ պետության տնտեսության հետ:

Հոդված 3

1. Եվրոպական ընկերությունը, 2(1), (2) և (3) հոդվածի իմաստով, համարվում է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերություն, որի գործունեությունը կարգավորվում է տվյալ ընկերության գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով:

2. Եվրոպական ընկերությունը կարող է հիմնել եվրոպական ընկերության ձևի մեկ կամ ավելի դուստր ընկերություններ: Եթե դուստր եվրոպական ընկերության գտնվելու վայրը մի անդամ պետությունում է, որի իրավական դրույթները նախատեսում են, որ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունը պետք է ունենա մեկից ավելի բաժնետեր, ապա այդ դրույթները չեն կիրառվում դուստր սահմանափակ պատասխանատվությամբ եվրոպական բաց ընկերության դեպքում: «Մեկ մասնակից ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ փակ ընկերությունների մասին» Խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 21-ի ընկերությունների իրավունքի վերաբերյալ (89/667/ԵՏՀ) տասներկուերորդ հրահանգը (5) կիրարկող ներպետական

իրավունքի դրույթները եվրոպական ընկերությունների նկատմամբ կիրառվում են համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո:

Հոդված 4

1. Եվրոպական ընկերության կապիտալն արտահայտվում է եվրոյով:
2. Եվրոպական ընկերության տեղաբաշխված կապիտալը պետք է կազմի առնվազն 120000 եվրո:
3. Որոշակի տեսակի գործունեություն իրականացնող ընկերությունների դեպքում ավելի մեծ տեղաբաշխված կապիտալ նախատեսող անդամ պետության օրենքները կիրառվում են այն սահմանափակ պատասխանատվությամբ եվրոպական բաց ընկերությունների նկատմամբ, որոնց գտնվելու վայրը տվյալ անդամ պետությունում է:

Հոդված 5

4(1) և (2) հոդվածի դրույթների պահպանմամբ՝ սահմանափակ պատասխանատվությամբ եվրոպական բաց ընկերության կապիտալը, դրա պահպանումն ու չափի փոփոխումը, ինչպես նաև դրա բաժնետոմսերը, պարտատոմսերն ու նմանատիպ այլ արժեթղթերը կարգավորվում են նույն դրույթներով, որոնք կիրառվում են այն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության նկատմամբ, որի գտնվելու վայրն այն անդամ պետությունում է, որտեղ գրանցված է եվրոպական ընկերությունը:

Հոդված 6

Սույն Կանոնակարգի իմաստով, «Եվրոպական ընկերության կանոնադրություն» նշանակում է ն՝ եվրոպական ընկերության հիմնադիր փաստաթղթերը, և՝ ընկերության կանոնադրությունը, եթե դրանք կազմված են առանձին փաստաթղթերով:

Հոդված 7

Եվրոպական ընկերության գտնվելու վայրը տեղակայվում է Համայնքի տարածքում՝ այն անդամ պետությունում, որտեղ գտնվում է տվյալ ընկերության գլխավոր գրասենյակը: Անդամ պետությունը կարող է իր տարածքում գրանցված եվրոպական ընկերությանը պարտավորեցնել նույն վայրում տեղակայել գլխավոր գրասենյակը և գտնվելու վայրը:

Հոդված 8

1. Եվրոպական ընկերության գտնվելու վայրի տեղափոխումն այլ անդամ պետություն կարող է իրականացվել 2-րդ և 13-րդ պարբերությունների համաձայն: Այդ տեղափոխումը չի հանգեցնում եվրոպական ընկերության գործունեության դադարմանը կամ նոր իրավաբանական անձի ստեղծմանը:

2. Եվրոպական ընկերության կառավարման կամ վարչական մարմինը պատրաստում է տեղափոխման առաջարկը և այն հրապարակում 13-րդ հոդվածին համապատասխան՝ չսահմանափակելով գտնվելու վայրի անդամ պետության կողմից նախատեսված՝ հրապարակման լրացուցիչ ձևերի պահանջը: Այդ առաջարկում նշվում է եվրոպական ընկերության ընթացիկ անվանումը, գտնվելու վայրը և գրանցման համարը, ինչպես նաև՝

ա) եվրոպական ընկերության՝ առաջարկվող գտնվելու վայրը.

բ) եվրոպական ընկերության առաջարկվող կանոնադրությունը, որում, անհրաժեշտության դեպքում, նշվում է եվրոպական ընկերության նոր անվանումը.

գ) տեղափոխման հնարավոր ազդեցությունը աշխատողներին ընդգրկելու վրա.

դ) տեղափոխման առաջարկվող ժամանակացույցը.

ե) բաժնետերերի և (կամ) պարտատերերի պաշտպանության համար նախատեսված իրավունքները:

3. Եվրոպական ընկերության կառավարման կամ վարչական մարմինը մշակում է տեղափոխման իրավական և տնտեսական հայեցակետերը բացատրող ու հիմնավորող և բաժնետերերի, պարտատերերի և աշխատողների վրա տեղափոխման ազդեցությունը բացատրող զեկույց:

4. Եվրոպական ընկերության բաժնետերերն ու պարտատերերն իրավասու են, տեղափոխման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով ընդհանուր ժողովի գումարումից առնվազն մեկ ամիս առաջ, եվրոպական ընկերության գտնվելու վայրում ծանոթանալու տեղափոխման առաջարկին և 3-րդ պարբերությամբ նախատեսված զեկույցին և, ցանկության դեպքում, անվճար ձեռք բերել այդ փաստաթղթերի պատճենները:

5. Անդամ պետությունը կարող է, իր տարածքում գրանցված եվրոպական ընկերության դեպքում, ընդունել դրույթներ, որոնք նախատեսված են ապահովելու տեղափոխմանը դեմ հանդիսացող փոքրամասնություն կազմող բաժնետերերի պատշաճ պաշտպանությունը:

6. Առաջարկի հրապարակումից հետո երկու ամսվա ընթացքում տեղափոխման մասին որոշում չի կարող ընդունվել: Նման որոշումն ընդունվում է 59-րդ հոդվածի համաձայն:

7. Մինչ իրավասու մարմնի կողմից 8-րդ պարբերությունում նշված վկայագրի տրամադրումը՝ եվրոպական ընկերությունը պետք է հիմնավորի, որ տեղափոխման առաջարկի հրապարակումից առաջ առկա պարտավորությունների առումով եվրոպական ընկերության պարտատերերի և այլ իրավատերերի (ներառյալ պետական մարմինների) շահերը պատշաճ կերպով պաշտպանվել են՝ համաձայն այն անդամ պետության սահմանած պահանջների, որտեղ մինչ տեղափոխումը եղել է եվրոպական ընկերության գտնվելու վայրը:

Անդամ պետությունը կարող է առաջին ենթապարբերությունը կիրառել նաև այն պարտավորությունների նկատմամբ, որոնք ծագում են (կամ կարող են ծագել) տեղափոխումից առաջ:

Առաջին և երկրորդ ենթապարբերությունները չեն սահմանափակում եվրոպական ընկերության նկատմամբ՝ պետական մարմիններին վճարների կատարման կամ կատարումն ապահովող միջոցների վերաբերյալ անդամ պետությունների ներպետական օրենսդրության կիրառումը:

8. Եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետության դատարանը, նոտարը կամ այլ իրավասու մարմինը հավաստագիր է տալիս այն մասին, որ իրականացվել են նախքան տեղափոխումը պահանջվող գործողություններն ու ընթացակարգերը:

9. Նոր գրանցումը չի կարող կատարվել մինչև 8-րդ պարբերությունում նշված հավաստագիրը ներկայացնելը և նոր գտնվելու վայրի երկրում գրանցման համար անհրաժեշտ ընթացակարգերի իրականացման ապացույցների տրամադրումը:

10. Եվրոպական ընկերության գտնվելու վայրի տեղափոխումը և դրան հաջորդող՝ կանոնադրությունում կատարված փոփոխությունն ուժի մեջ են մտնում եվրոպական ընկերության նոր գտնվելու վայրի գրանցամատյանում 12-րդ հոդվածի համաձայն դրա գրանցման պահից:

11. Եվրոպական ընկերության նոր գրանցումը կատարելուց հետո նոր գրանցումը կատարած ռեգիստրն այդ մասին տեղյակ է պահում նախկին գրանցումը կատարած ռեգիստրին: Նախկին գրանցումից հանելը կատարվում է ծանուցումն ստանալու պահից ոչ շուտ:

12. Նոր գրանցման ու նախկին գրանցումից դուրս գալու վերաբերյալ տեղեկությունը հրապարակվում է տվյալ անդամ պետություններում՝ 13-րդ հոդվածի համաձայն:

13. Եվրոպական ընկերության նոր գրանցման վերաբերյալ տեղեկության հրապարակման պահից նոր գտնվելու վայրը կարող է վկայակոչվել երրորդ անձանց հետ հարաբերություններում: Սակայն, քանի դեռ եվրոպական ընկերության նախկին գտնվելու վայրի գրանցումից դուրս գալու վերաբերյալ տեղեկությունը չի հրապարակվել, երրորդ անձինք կարող են շարունակել վկայակոչել նախկին գտնվելու վայրը՝ բացառությամբ երբ եվրոպական ընկերությունը ապացուցում է, որ երրորդ անձինք տեղյակ են եղել նոր գտնվելու վայրի մասին:

14. Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ այն դեպքում երբ տվյալ անդամ պետությունում գրանցված եվրոպական ընկերության գտնվելու վայրի տեղափոխումը կհանգեցնի դրա նկատմամբ կիրառվող իրավունքի փոփոխության, տեղափոխում չի կատարվում, եթե տվյալ անդամ պետության որևէ իրավասու մարմին առարկություն է ներկայացնում 6-րդ պարբերությամբ սահմանված երկամսյա ժամանակահատվածում: Առարկությունը կարող է ներկայացվել միայն հանրային շահերի պաշտպանության հիմքով:

Եթե եվրոպական ընկերությունը վերահսկվում է ներպետական ֆինանսական վերահսկիչ մարմնի կողմից՝ համաձայն Համայնքի հրահանգների, ապա այդ մարմինը նույնպես գտնվելու վայրի փոփոխությանն առարկելու իրավունք ունի:

Այդ դեպքում պետք է հնարավոր լինի վերանայում դատական մարմնի կողմից:

15. Եվրոպական ընկերությունը չի կարող տեղափոխել իր գտնվելու վայրը, եթե իր դեմ հարուցվել են գործունեության դադարման, լուծարման, սնանկության կամ վճարումների կասեցման, կամ նմանատիպ այլ հայցեր:

16. Եթե եվրոպական ընկերությունը տեղափոխել է իր գտնվելու վայրը այլ անդամ պետություն, 10-րդ պարբերությամբ սահմանված տեղափոխմանը նախորդող ժամանակահատվածում հայցային որևէ հիմքի առաջացման դեպքում համարվում է, որ դրա գտնվելու վայրը այն անդամ պետությունում է, որտեղ եվրոպական ընկերությունը գրանցված էր նախքան տեղափոխումը, եթե անգամ եվրոպական ընկերության նկատմամբ դատական գործը հարուցվել է տեղափոխումից հետո:

Հոդված 9

1. Եվրոպական ընկերության գործունեությունը կարգավորվում է՝

ա) սույն Կանոնակարգով.

բ) սույն Կանոնակարգով հստակ նախատեսված դեպքերում՝ իր կանոնադրության դրույթներով, կամ

գ) սույն Կանոնակարգով չկարգավորվող կամ մասամբ կարգավորվող հարցերի չկարգավորվող հայեցակետերի դեպքում՝

i) հատուկ եվրոպական ընկերությանը վերաբերող Համայնքի ակտերի կիրարկման նպատակով անդամ պետությունների կողմից ընդունված օրենքների դրույթներով.

ii) անդամ պետության օրենքների դրույթներով, որոնք վերաբերում են եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն ստեղծված սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությանը.

iii) իր կանոնադրության դրույթներով՝ այնպես, ինչպես և եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի համաձայն ստեղծված սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունը:

2. Անդամ պետության կողմից ընդունված՝ հատուկ եվրոպական ընկերությանը վերաբերող օրենքների դրույթները պետք է համապատասխանեն I հավելվածում նշված սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների վրա տարածվող հրահանգներին:

3. Եթե եվրոպական ընկերության կողմից իրականացվող գործունեությունը կարգավորվում է ներպետական օրենքների հատուկ դրույթներով, ապա տվյալ օրենքներն ամբողջությամբ կիրառվում են եվրոպական ընկերության նկատմամբ:

Հոդված 10

Սույն Կանոնակարգի դրույթների պահպանմամբ՝ յուրաքանչյուր անդամ պետությունում եվրոպական ընկերության նկատմամբ կիրառվում է տվյալ ընկերության գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով ստեղծված սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության նկատմամբ կիրառվող ռեժիմը:

Հոդված 11

1. Եվրոպական ընկերության անվանմանը նախորդում կամ հաջորդում է «SE» հապավումը:
2. Միայն եվրոպական ընկերությունները կարող են ունենալ «SE» հապավումն իրենց անվանման մեջ:
3. Այնուհանդերձ, մինչ սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը, որևէ անդամ պետությունում գրանցված այն ընկերությունները, ֆիրմաներն ու այլ իրավաբանական անձինք, որոնց անվանման մեջ առկա է «SE» հապավումը, պարտավոր չեն փոխել իրենց անվանումը:

Հոդված 12

1. Յուրաքանչյուր եվրոպական ընկերություն գրանցվում է իր գտնվելու վայրի անդամ պետության գրանցամատյանում, որն ստեղծվել է տվյալ անդամ պետության իրավունքով՝ «Մահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների ստեղծման և դրանց կապիտալի պահպանման ու դրա չափի փոփոխման հետ կապված՝ Պայմանագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով ընկերություններից՝ մասնակիցների և այլոց շահերի պաշտպանության համար անդամ պետությունների կողմից պահանջվող երաշխիքների համաձայնեցման մասին, որը նպատակ է հետապնդում նման երաշխիքները համարժեք դարձնել» Խորհրդի 1968 թվականի մարտի 9-ի 68/151/ԵՏՀ առաջին հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն(6):
 2. Եվրոպական ընկերությունը չի կարող գրանցվել, քանի դեռ աշխատողներին ընդգրկելու միջոցառումների վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվել 2001/86/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն կամ նույն հրահանգի 3(6) հոդվածի համաձայն որոշում չի ընդունվել, կամ եթե նույն հրահանգի 5-րդ հոդվածի համաձայն բանակցությունների ժամկետը լրացել է առանց համաձայնության ձեռքբերման:
 3. Որպեսզի եվրոպական ընկերությունը գրանցվի այն անդամ պետությունում, որը կիրառել է 2001/86/ԵՀ հրահանգի 7(3) հոդվածում նշված տարբերակը, կամ հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն պետք է համաձայնություն կնքվեր աշխատողներին ընդգրկելու, ներառյալ մասնակցության միջոցառումների վերաբերյալ կամ նախքան եվրոպական ընկերության գրանցումը մասնակից ընկերություններից ոչ մեկի նկատմամբ չպետք է կիրառվեին մասնակցության վերաբերյալ կանոններ:
 4. Եվրոպական ընկերության կանոնադրությունը ոչ մի դեպքում չպետք է հակասի աշխատողներին ընդգրկելու՝ արդեն իսկ որոշված միջոցառումներին: Եթե Հրահանգի համաձայն սահմանված նման նոր միջոցառումները հակասում են գործող կանոնադրությանը, ապա անհրաժեշտության սահմաններում դրանում կատարվում են փոփոխություններ:
- Այդ դեպքում անդամ պետությունը կարող է նախատեսել, որ եվրոպական ընկերության կառավարման կամ վարչական մարմինն իրավասու է փոփոխություններ կատարելու ընկերության կանոնադրությունում՝ առանց բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման:

Հոդված 13

Սույն Կանոնակարգի համաձայն հրապարակման ենթակա՝ եվրոպական ընկերությանը վերաբերող փաստաթղթերի ու մանրամասն տեղեկությունների հրապարակումն իրականացվում է 68/151/ԵՏՀ հրահանգի համաձայն՝ եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետության օրենքներով սահմանված կարգով :

Հոդված 14

1. Եվրոպական ընկերության գրանցման և գրանցումից դուրս գալու մասին հայտարարությունը տեղեկատվական նպատակներով հրապարակվում է Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում՝ 13-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:
Հայտարարության մեջ նշվում է եվրոպական ընկերության անվանումը, գրանցման համարը, գրանցման ամսաթիվն ու վայրը, հրապարակման ամսաթիվը, վայրը և վերնագիրը, ինչպես նաև եվրոպական ընկերության գտնվելու վայրն ու գործունեության ոլորտը:
2. 8-րդ հոդվածի համաձայն եվրոպական ընկերության գտնվելու վայրի տեղափոխման դեպքում հրապարակվում է հայտարարություն, որը պարունակում է 1-ին պարբերությունում նշված տեղեկությունները՝ նոր գրանցմանը վերաբերող նույն տեղեկությունների հետ միասին:
3. 1-ին պարբերությունում նշված մանրամասն տեղեկություններն ուղարկվում են Եվրոպական համայնքների պաշտոնական հրապարակումների գրասենյակ՝ 13-րդ հոդվածում նշված հրապարակումից հետո մեկ ամսվա ընթացքում:

ԲԱԺԻՆ II

ՍՏԵՂԾՈՒՄԸ

Մաս 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 15

1. Սույն Կանոնակարգի դրույթների պահպանմամբ՝ եվրոպական ընկերության ստեղծումը կարգավորվում է դրա գտնվելու վայրի անդամ պետությունում սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների ստեղծման նկատմամբ կիրառվող իրավունքով:

2. Եվրոպական ընկերության գրանցումը հրապարակվում է 13-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 16

1. Եվրոպական ընկերությունը իրավասուբյեկտություն է ձեռք բերում 12-րդ հոդվածով նշված գրանցամատյանում գրանցվելու օրվանից:

2. Եթե 12-րդ հոդվածով նախատեսված կարգով եվրոպական ընկերության գրանցումից առաջ տվյալ ընկերության անունից գործողություններ են կատարվել, և գրանցումից հետո եվրոպական ընկերությունը չի ստանձնում այդ գործողություններից բխող պարտավորությունները, տվյալ գործողությունները կատարած ֆիզիկական անձինք, ընկերությունները, ֆիրմաները կամ այլ իրավաբանական անձինք համապարտ և բաժնային պատասխանատվություն են կրում դրանց համար, եթե այլ համաձայնություն ձեռք չի բերվել:

Մաս 2

Ստեղծումը միաձուլման միջոցով

Հոդված 17

1. Եվրոպական ընկերությունը կարող է ստեղծվել միաձուլման միջոցով՝ 2(1) հոդվածի համաձայն:

2. Միաձուլումը կարող է իրականացվել՝

ա) «Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլումների մասին»⁽⁷⁾ (հիմնված Պայմանագրի 54(3)(ե) հոդվածի վրա) Խորհրդի 1978 թվականի հոկտեմբերի 9-ի (78/855/ԵՏՀ) երրորդ հրահանգի 3(1) հոդվածով սահմանված՝ ձեռքբերման միջոցով միաձուլման ընթացակարգի համաձայն կամ

բ) նշված հրահանգի 4(1) հոդվածով նախատեսված՝ նոր ընկերության ստեղծման միջոցով միաձուլման ընթացակարգի համաձայն:

Ձեռքբերման միջոցով միաձուլման դեպքում, ձեռքբերող ընկերությունը միաձուլման արդյունքում դառնում է եվրոպական ընկերության ձևի ընկերություն: Նոր ընկերության ստեղծման միջոցով միաձուլման դեպքում եվրոպական ընկերությունը նորաստեղծ ընկերությունն է:

Հոդված 18

Մույն մասով չկարգավորվող կամ մասամբ կարգավորվող հարցերի չկարգավորվող հայեցակետերի դեպքում, միաձուլման միջոցով եվրոպական ընկերության ստեղծմանը ներգրավված յուրաքանչյուր ընկերության գործունեությունը կարգավորվում է համապատասխան անդամ պետության իրավունքի դրույթներով, որոնք կիրառվում են սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ՝ 78/855/ԵՏՀ հրահանգի համաձայն:

Հոդված 19

Անդամ պետության օրենքներով կարող է նախատեսվել, որ ընկերությունը, որի գործունեությունը կարգավորվում է տվյալ անդամ պետության իրավունքով, չի կարող մասնակցել միաձուլման միջոցով եվրոպական ընկերության ստեղծմանը, եթե տվյալ անդամ պետության իրավասու մարմիններից որևէ մեկը առարկում է դրա դեմ նախքան հոդված 25(2) հոդվածում նշված հավաստագրի տրամադրումը:

Առարկությունը կարող է ներկայացվել միայն հանրային շահերի պաշտպանության հիմքով: Այդ դեպքում պետք է հնարավոր լինի վերանայում դատական մարմնի կողմից:

Հոդված 20

1. Միաձուլվող ընկերությունների կառավարման կամ վարչական մարմինները կազմում են միաձուլման նախնական պայմանները: Միաձուլման նախնական պայմանները ներառում են հետևյալ մանրամասն տեղեկությունները՝

ա) միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի, ինչպես նաև եվրոպական ընկերության համար առաջարկվող անվանումը և գտնվելու վայրը.

բ) բաժնետոմսերի փոխարկման հարաբերակցությունը և ցանկացած փոխհատուցման չափը.

գ) եվրոպական ընկերությունում բաժնետոմսերի բաշխման պայմանները.

դ) այն ամսաթիվը, որից եվրոպական ընկերության բաժնետոմսերի նկատմամբ սեփականությունը բաժնետերերին իրավունք է տալիս մասնակցելու շահույթի բաշխմանը, ինչպես նաև այդ իրավունքը շոշափող ցանկացած հատուկ պայման.

ե) այն ամսաթիվը, որից միաձուլվող ընկերությունների գործարքները հաշվապահական հաշվառման նպատակներով կհամարվեն եվրոպական ընկերության գործարքները.

զ) հատուկ իրավունքներ տվող բաժնետոմսերի, ինչպես նաև բաժնետոմսերից բացի այլ արժեթղթերի սեփականատերերին եվրոպական ընկերության կողմից վերապահված իրավունքները կամ նրանց վերաբերյալ առաջարկվող միջոցառումները.

է) միաձուլման նախնական պայմաններն ուսումնասիրող փորձագետներին կամ միաձուլվող ընկերությունների վարչական, կառավարման, վերահսկիչ կամ ստուգող մարմինների տրվող հատուկ արտոնությունները.

ը) Եվրոպական ընկերության կանոնադրությունը.

թ) 2001/86/ԵՀ հրահանգի համաձայն աշխատողներին ընդգրկելու միջոցառումների որոշման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկություն:

2. Միաձուլվող ընկերությունները միաձուլման նախնական պայմաններում կարող են ներառել նաև այլ կետեր:

Հոդված 21

Յուրաքանչյուր միաձուլվող ընկերության համար և այն անդամ պետության սահմանած լրացուցիչ պահանջների պահպանմամբ, որի իրավագործության ներքո է գտնվում տվյալ ընկերությունը, այդ անդամ պետության պաշտոնական տեղեկագրում հրապարակվում են հետևյալ մանրամասն տեղեկությունները

ա) միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի տեսակը, անվանումը և գտնվելու վայրը.

բ) գրանցամատյանը, որում պահվում են յուրաքանչյուր միաձուլվող ընկերության վերաբերյալ 68/151/ԵՏՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված փաստաթղթերը, և տվյալ գրանցամատյանում դրանց մուտքի համարը.

գ) տվյալ ընկերության պարտատերերի իրավունքների իրականացման նպատակով 24-րդ հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցառումների մասին նշում և այն հասցեն, որտեղից կարելի է ստանալ այդ միջոցառումների մասին անվճար ամբողջական տեղեկատվություն.

դ) տվյալ ընկերության փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների իրականացման նպատակով 24-րդ հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցառումների մասին նշում և այն հասցեն, որտեղ կարելի է ստանալ այդ միջոցառումների մասին անվճար ամբողջական տեղեկատվություն.

ե) եվրոպական ընկերության համար առաջարկվող անվանումը և գտնվելու վայրը:

Հոդված 22

Որպես միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի կողմից գործող փորձագետների այլընտրանք, 78/855/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածով նախատեսված մեկ կամ ավելի անկախ փորձագետները, որոնք այդ նպատակով ընկերությունների համատեղ առաջարկով նշանակվել են միաձուլվող ընկերություններից մեկի կամ նախատեսվող եվրոպական ընկերության անդամ պետության դատական կամ վարչական մարմնի կողմից, կարող են ուսումնասիրել միաձուլման նախնական պայմանները և բոլոր բաժնետերերի համար կազմել մեկ ընդհանուր զեկույց:

Փորձագետներն իրավունք ունեն յուրաքանչյուր միաձուլվող ընկերությունից պահանջել իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն:

Հոդված 23

1. Միաձուլման յուրաքանչյուր միաձուլվող ընկերության ընդհանուր ժողովը հաստատում է միաձուլման նախնական պայմանները:
2. Եվրոպական ընկերությունում աշխատողներին ընդգրկելն իրականացվում է 2001/86/ԵՀ հրահանգի համաձայն: Յուրաքանչյուր միաձուլվող ընկերության ընդհանուր ժողով կարող է իրավունք վերապահել պայմանավորելու եվրոպական ընկերության գրանցման թույլտվությունը այդ հրահանգի համաձայն սահմանված միջոցառումներն իր կողմից հստակ արտահայտված վավերացմամբ:

Հոդված 24

1. Յուրաքանչյուր միաձուլվող ընկերությունը կարգավորող անդամ պետության իրավունքը կիրառվում է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլման դեպքում՝ հաշվի առնելով միաձուլման միջսահմանային բնույթը հետևյալ անձանց շահերի պաշտպանության առումով՝
 - ա) միաձուլվող ընկերությունների պարտատերեր.
 - բ) միաձուլվող ընկերությունների պարտատոմսերի սեփականատերեր.
 - գ) միաձուլվող ընկերություններում հատուկ իրավունքներ տվող՝ բաժնետոմսերից բացի այլ արժեթղթերի սեփականատերեր:
2. Անդամ պետությունը կարող է, այն ընկերությունների դեպքում, որոնց գործունեությունը կարգավորվում է իր իրավունքով, ընդունել միաձուլմանը դեմ հանդես եկող փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պատշաճ պաշտպանությունն ապահովող դրույթներ:

Հոդված 25

1. Յուրաքանչյուր միաձուլվող ընկերությանը վերաբերող ընթացակարգի առումով միաձուլման օրինականությունը մանրամասն ուսումնասիրվում է այն անդամ պետության՝ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլումները կարգավորող իրավական նորմերի համաձայն, որի իրավագործության ներքո է գտնվում միաձուլվող ընկերությունը:

2. Յուրաքանչյուր անդամ պետությունում դատարանը, նոտարը կամ այլ իրավասու մարմինը հավաստագիր է տալիս առ այն, որ նախքան միաձուլումը պահանջվող գործողություններն ու ընթացակարգերն իրականացվել են:

3. Եթե միաձուլվող ընկերության անդամ պետության իրավունքը նախատեսում է բաժնետոմսերի փոխարկման հարաբերակցության մանրամասն ուսումնասիրություն և փոփոխություն կամ փոքրամասնություն կազմող բաժնետերերին փոխհատուցման ընթացակարգ՝ առանց խոչընդոտելու միաձուլման գրանցմանը, ապա այդ ընթացակարգը կիրառվում է միայն եթե նման ընթացակարգ չնախատեսող անդամ պետությունների միաձուլվող մյուս ընկերությունները, հոդված 23 (1) հոդվածի համաձայն միաձուլման նախնական պայմանները հաստատելիս, հստակորեն ընդունում են, որ այդ միաձուլվող ընկերության բաժնետերերն իրավունք ունեն օգտվելու նման ընթացակարգից: Նման դեպքերում դատարանը, նոտարը կամ իրավասու այլ մարմինները կարող են տալ 2-րդ պարբերությունում նշված հավաստագիրը, եթե անգամ այդ ընթացակարգն սկսվել է: Այդուհանդերձ, հավաստագրում պետք է նշվի, որ ընթացակարգը չի ավարտվել: Ընթացակարգի արդյունքում ընդունված որոշումը պարտադիր է ձեռքբերող ընկերության և դրա բոլոր բաժնետերերի համար:

Հոդված 26

1. Ընթացակարգի՝ միաձուլման իրականացմանը և եվրոպական ընկերության ստեղծմանը վերաբերող մասի առումով միաձուլման օրինականությունը մանրամասն ուսումնասիրում է եվրոպական ընկերության՝ առաջարկվող գտնվելու վայրի անդամ պետության դատարանի, նոտարական գրասենյակի կամ այլ իրավասու մարմնի կողմից, որը սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլման օրինականության տվյալ կողմը մանրամասն ուսումնասիրելու իրավասություն ունի:

2. Այդ նպատակով յուրաքանչյուր միաձուլվող ընկերություն իրավասու մարմնին է հանձնում 25(2) հոդվածով նախատեսված հավաստագիրը՝ վերջինիս տրամադրումից հետո վեց ամսվա ընթացքում, տվյալ ընկերության կողմից հաստատված միաձուլման նախնական պայմանների պատճենի հետ մեկտեղ:

3. 1-ին պարբերությունում նշված մարմինները պետք է մասնավորապես հավաստեն, որ միաձուլվող ընկերությունները միաձուլման նախնական պայմանները հաստատել են նույն բովանդակությամբ և որ աշխատողներին ընդգրկելու միջոցառումները սահմանվել են 2001/86/ԵՇ հրահանգի համաձայն:

4. 15-րդ հոդվածի համաձայն այդ մարմինը պետք է համոզվի, որ եվրոպական ընկերությունն ստեղծվել է այն անդամ պետության իրավունքի պահանջներին համապատասխան, որտեղ, 15-րդ հոդվածի համաձայն, տվյալ ընկերության գտնվելու վայրն է:

Հոդված 27

1. Միաձուլումը տեղի է ունենում և միաժամանակ եվրոպական ընկերությունը ստեղծված է համարվում տվյալ ընկերության՝ 12-րդ հոդվածի համաձայն կատարված գրանցման պահից:

2. Եվրոպական ընկերությունը չի կարող գրանցվել նախքան 25-րդ և 26-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգերի ավարտը:

Հոդված 28

Յուրաքանչյուր միաձուլվող ընկերության պարագայում միաձուլման ավարտի մասին տեղեկատվությունը հրապարակվում է յուրաքանչյուր անդամ պետության իրավունքով սահմանված կարգով՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 29

1. 17(2)(ա) հոդվածի համաձայն իրականացված միաձուլումը, օրենքի ուժով և միաժամանակ, ունի հետևյալ հետևանքները՝

ա) յուրաքանչյուր ձեռքբերվող ընկերության ակտիվներն ու պարտավորությունները փոխանցվում են ձեռքբերող ընկերությանը.

բ) ձեռքբերվող ընկերության բաժնետերերը դառնում են ձեռքբերող ընկերության բաժնետերեր.

գ) ձեռքբերվող ընկերությունը դադարում է գոյություն ունենալ.

դ) ձեռքբերող ընկերությունը դառնում է եվրոպական ընկերության ձևի ընկերություն:

2. 17(2)(բ) հոդվածի համաձայն իրականացված միաձուլումն օրենքի ուժով և միաժամանակ, ունի հետևյալ հետևանքները՝

ա) միաձուլվող ընկերությունների բոլոր ակտիվներն ու պարտավորությունները փոխանցվում են եվրոպական ընկերությանը.

բ) միաձուլվող ընկերությունների բաժնետերերը դառնում են եվրոպական ընկերության բաժնետերեր.

գ) միաձուլվող ընկերությունները դադարում են գոյություն ունենալ:

3. Երբ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլման դեպքում անդամ պետության իրավունքը պահանջում է հատուկ ընթացակարգերի իրականացում՝ նախքան միաձուլվող ընկերությունների ակտիվների, իրավունքների և պարտավորությունների փոխանցումը կսկսի գործել երրորդ անձանց նկատմամբ, այդ ընթացակարգերը կիրառվում և իրականացվում են այդ ընկերությունների կողմից կամ, գրանցումից հետո, եվրոպական ընկերության կողմից:

4. Ներպետական իրավունքից, գործելակերպից և անհատական աշխատանքային պայմանագրերից կամ աշխատանքային հարաբերություններից բխող և այդ պահին գործող աշխատանքային պայմանների համաձայն մասնակից ընկերությունների իրավունքներն ու

պարտավորությունները գրանցման ուժով փոխանցվում են եվրոպական ընկերությանը՝ վերջինիս գրանցումից հետո:

Հոդված 30

Եվրոպական ընկերության գրանցումից հետո 2(1) հոդվածով սահմանված միաձուլումը չի կարող առաջին ճանաչվել:

25-րդ և 26-րդ հոդվածներով նախատեսված միաձուլման օրինականության մանրամասն ուսումնասիրության բացակայությունը կարող է եվրոպական ընկերության գործունեության դադարման հիմքերից մեկը հանդիսանալ:

Հոդված 31

1. Երբ 17(2)(ա) հոդվածի իմաստով միաձուլումն իրականացվում է մի ընկերության կողմից, որն այլ ընկերության ընդհանուր ժողովի ժամանակ ձայնի իրավունք տվող բոլոր բաժնետոմսերի և այլ արժեթղթերի սեփականատերն է, չեն կիրառվում ո՛չ 20(1)(բ), (գ) ու (դ) և 29(1)(բ), ո՛չ էլ 22-րդ հոդվածները: Այս դեպքում, այդուհանդերձ, կիրառվում է յուրաքանչյուր միաձուլվող ընկերության և սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլումները կարգավորող ներպետական իրավունքը՝ 78/855/ԵՏՀ հրահանգի 24-րդ հոդվածի համաձայն:

2. Երբ ընկերությունների ձեռքբերման միջոցով միաձուլումն իրականացվում է մի ընկերության կողմից, որն այլ ընկերության ընդհանուր ժողովի ժամանակ ձայնի իրավունք տվող 90 տոկոս կամ ավելի, բայց ոչ բոլոր բաժնետոմսերի և այլ արժեթղթերի սեփականատերն է, ապա կառավարման կամ վարչական մարմնի ղեկույցները, անկախ փորձագետի կամ փորձագետների ղեկույցները և մանրամասն ուսումնասիրության ենթակա փաստաթղթերը պահանջվում են միայն ձեռքբերող կամ ձեռքբերվող ընկերության գործունեությունը կարգավորող ներպետական իրավունքով նախատեսված դեպքերում:

Այդուհանդերձ, անդամ պետությունները կարող են սույն պարբերությունը կիրառել այն դեպքում, երբ ընկերությունը ձայնի իրավունք տվող 90 տոկոս կամ ավելի, սակայն ոչ բոլոր բաժնետոմսերի սեփականատերն է:

Մաս 3

Հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծումը

Հոդված 32

1. Հոլդինգային եվրոպական ընկերությունը կարող է ստեղծվել 2(2) հոդվածի համաձայն:

2(2) հոդվածի համաձայն Հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծումը նախաձեռնող ընկերությունը շարունակում է գոյություն ունենալ:

2. Այն ընկերությունների կառավարման կամ վարչական մարմինները, որոնք նախաձեռնում են նման գործընթաց, կազմում են հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման նախնական պայմանները՝ նույն բովանդակությամբ: Նախնական պայմանները ներառում են հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման իրավական և տնտեսական հայեցակետերը բացատրող ու հիմնավորող և հոլդինգային եվրոպական ընկերության ձևի ընկերություն դառնալու պարագայում բաժնետերերի ու աշխատողների համար դրանից բխող հետևանքները նկարագրող զեկույց: Նախնական պայմաններում նշվում է նաև 20(1)(ա), (բ), (գ), (դ), (ե), (ը) և (թ) հոդվածով նախատեսված մանրամասն տվյալները և գործընթացը նախաձեռնող ընկերություններից յուրաքանչյուրում բաժնետոմսերի այն նվազագույն համամասնությունը, որը բաժնետերերը պետք է ներդնեն հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման նպատակով: Այդ համամասնությունը կազմում են բաժնետոմսերը, որոնց նկատմամբ սեփականության իրավունքից բխում է մշտական ձայնի իրավունքների 50 տոկոսից ավելին:

3. Գործընթացը նախաձեռնող յուրաքանչյուր ընկերություն հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման նախնական պայմանները հրապարակում է այդ մասին որոշում կայացնելու նպատակով ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ՝ յուրաքանչյուր անդամ պետության ներպետական իրավունքով սահմանված կարգով՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին համապատասխան:

4. Մեկ կամ ավելի փորձագետներ, որոնք անկախ են գործընթացը նախաձեռնող ընկերություններից, և, 78/855/ԵՏՀ հրահանգի իրականացման նպատակով ընդունված ներպետական դրույթներին համապատասխան, նշանակվել կամ հաստատվել են այն անդամ պետության դատական կամ վարչական մարմնի կողմից, որի իրավագործությունը տարածվում է յուրաքանչյուր ընկերության վրա, ուսումնասիրում են 2-րդ պարբերության համաձայն կազմված ստեղծման նախնական պայմանները և կազմում են գրավոր զեկույց յուրաքանչյուր ընկերության բաժնետերերի համար: Գործընթացը նախաձեռնող ընկերությունների միջև համաձայնությամբ բոլոր ընկերությունների բաժնետերերի համար կարող է կազմվել մեկ գրավոր զեկույց մեկ կամ ավելի անկախ փորձագետների կողմից, որոնք նշանակվել կամ հաստատվել են այն անդամ պետության դատական կամ վարչական մարմնի կողմից, որի իրավագործությունը տարածվում է գործընթացը նախաձեռնող մեկ ընկերության կամ առաջարկվող եվրոպական ընկերության վրա՝ 78/855/ԵՏՀ հրահանգի իրականացման նպատակով ընդունված ներպետական դրույթներին համապատասխան:

5. Զեկույցում նշվում են գնահատման առանձնակի բարդությունները և բաժնետոմսերի փոխարկման հարաբերակցության արդար և ողջամիտ լինելը՝ նշելով այդ հարաբերակցության ընտրության մեթոդներն ու այդ մեթոդների համապատասխանությունը տվյալ դեպքում:

6. Գործընթացը նախաձեռնող յուրաքանչյուր ընկերության ընդհանուր ժողովը հաստատում է հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման նախնական պայմանները:

Հոլդինգային եվրոպական ընկերությունում աշխատողներին ընդգրկելն իրականացվում է 2001/86/ԵՀ հրահանգի համաձայն: Գործընթացը նախաձեռնող յուրաքանչյուր ընկերության ընդհանուր ժողով կարող է իրավունք վերապահել՝ հոլդինգային եվրոպական ընկերության գրանցման թույլտվությունը պայմանավորելու այդ հրահանգի համաձայն սահմանված միջոցառումներն իր կողմից հստակ արտահայտված վավերացմամբ:

7. Այս դրույթները, համապատասխան փոփոխություններով, կիրառվում են սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ:

Հոդված 33

1. Գործընթացը նախաձեռնող ընկերությունների բաժնետերերին տրվում է եռամսյա ժամկետ այդ ընկերություններին՝ հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման համար իրենց բաժնեմասերի ներդրման մտադրության մասին տեղեկացնելու համար: Այդ ժամկետն սկսվում է 32-րդ հոդվածի համաձայն հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման պայմանները վերջնականապես որոշելու օրվանից:

2. Հոլդինգային եվրոպական ընկերությունն ստեղծվում է միայն այն ժամանակ, երբ 1-ին պարբերությունում նշված ժամկետում, գործընթացը նախաձեռնող ընկերությունների բաժնետերերն ընկերություններից յուրաքանչյուրում բաժնեմասի նվազագույն մասնաբաժինը տրամադրել են ընկերությունների ստեղծման նախնական պայմաններին համապատասխան և եթե բոլոր այլ պայմանները բավարարված են:

3. Եթե հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման պայմանները բավարարվել են 2-րդ պարբերությանը համապատասխան, նախաձեռնող ընկերություններից յուրաքանչյուրի դեպքում այդ փաստը հրապարակվում է 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի իրականացման նպատակով ընդունված՝ այդ ընկերություններից յուրաքանչյուրի գործունեությունը կարգավորող ներպետական իրավական նորմերով սահմանված կարգով:

Գործընթացը նախաձեռնող ընկերության այն բաժնետերերին, որոնք 1-ին պարբերությունում նշված ժամկետում դեռևս չեն հայտնել հոլդինգային եվրոպական ընկերության ստեղծման նպատակով գործընթացը նախաձեռնող ընկերություններին իրենց բաժնեմասերը տրամադրելու մտադրության մասին, այդ նպատակով տրվում է ևս մեկ ամիս:

4. Եվրոպական ընկերության ստեղծման համար արժեթղթեր ներդրած բաժնետերերը ստանում են հոլդինգային եվրոպական ընկերության բաժնետոմսեր:

5. Հոլդինգային եվրոպական ընկերությունը չի կարող գրանցվել մինչև 32-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերի իրականացումն ու 2-րդ պարբերությամբ նախատեսված պայմանների կատարումը:

Հոդված 34

Այն դեպքում, երբ ընկերությունները նախաձեռնում են տվյալ գործընթացը, անդամ պետությունը կարող է գործընթացին դեմ փոքրամասնություն կազմող բաժնետերերի, ինչպես նաև պարտատերերի և աշխատողների պաշտպանությունն ապահովող դրույթներ ընդունել:

Մաս 4

Եվրոպական դուստր ընկերության ստեղծումը

Հոդված 35

2(3) հոդվածի համաձայն կարող է ստեղծվել Եվրոպական ընկերություն:

Հոդված 36

Այդ գործընթացին մասնակցող ընկերությունների, ֆիրմաների և այլ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվում է ներպետական իրավունքի համաձայն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության ձևի դուստր ընկերության ստեղծմանը իրենց մասնակցությունը կարգավորող դրույթները:

Մաս 5

Գոյություն ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության վերափոխումը եվրոպական ընկերության

Հոդված 37

1. Եվրոպական ընկերություն կարող է ստեղծվել 2(4) հոդվածի համաձայն:

2. Չսահմանափակելով 12-րդ հոդվածի գործողությունը՝ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության վերափոխումը եվրոպական ընկերության չի հանգեցնում ընկերության գործունեության դադարմանը կամ նոր իրավաբանական անձի ստեղծմանը:

3. 8-րդ հոդվածի համաձայն գտնվելու վայրի տեղափոխումը մի անդամ պետությունից մյուսը և վերափոխումը չեն կարող տեղի ունենալ զուգահեռաբար:

4. Տվյալ ընկերության կառավարման կամ վարչական մարմինը կազմում է վերափոխման նախնական պայմանները և վերափոխման իրավական ու տնտեսական կողմերը բացատրող և հիմնավորող, ինչպես նաև բաժնետերերի ու աշխատողների համար եվրոպական ընկերության ձևի ընկերություն դառնալուց բխող հետևանքները նկարագրող զեկույց:

5. Վերափոխման նախնական պայմանները հրապարակվում են այդ մասին որոշում կայացնելու նպատակով ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ՝ յուրաքանչյուր անդամ պետության իրավունքով սահմանված կարգով՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին համապատասխան:

6. 7-րդ պարբերությամբ նախատեսված ընդհանուր ժողովի գումարումից առաջ մեկ կամ ավելի անկախ փորձագետները, որոնք 78/855/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածի կիրարկման նպատակով ընդունված ներպետական դրույթների համաձայն նշանակվել կամ հաստատվել են այն անդամ պետության դատական կամ վարչական մարմնի կողմից, որի իրավագործության ներքո է գտնվում եվրոպական ընկերության վերափոխվող ընկերությունը, հավաստում են, համապատասխան փոփոխությունների ենթարկված 77/91/ԵՏՀ(8) հրահանգի համաձայն, որ տվյալ ընկերությունն ունի առնվազն իր կապիտալի և այն պահուստային կապիտալի գումարին համարժեք գուտ ակտիվներ, որը, օրենքի կամ կանոնադրության համաձայն, ենթակա չէ բաշխման:

7. Տվյալ ընկերության ընդհանուր ժողովը հաստատում է վերափոխման նախնական պայմանները և եվրոպական ընկերության կանոնադրությունը: Ընդհանուր ժողովի որոշումն ընդունվում է 78/855/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածի կիրարկման նպատակով ընդունված ներպետական իրավունքի դրույթների համաձայն:

8. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ վերափոխումն իրականացվի վերափոխվող ընկերության այն մարմնի որակյալ մեծամասնությամբ կամ միաձայն կողմ քվեարկելու դեպքում, որտեղ առկա է աշխատողների մասնակցությունը:

9. Վերափոխվող ընկերության՝ աշխատանքի պայմանների վերաբերյալ ներպետական իրավունքից, պրակտիկայից և անհատական աշխատանքային պայմանագրերից կամ աշխատանքային հարաբերություններից բխող և գրանցման պահին գործող իրավունքներն ու պարտականությունները, այդ գրանցման ուժով, փոխանցվում են եվրոպական ընկերությանը:

ԲԱԺԻՆ III

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հոդված 38

Սույն Կանոնակարգով սահմանված պայմանների համաձայն՝ եվրոպական ընկերությունը կազմված է՝

ա) բաժնետերերի ընդհանուր ժողովից և

բ) կա՛մ վերահսկիչ և կառավարման մարմիններից (երկշերտ համակարգ), կա՛մ վարչական մարմնից (միաշերտ համակարգ)՝ կախված կանոնադրությամբ սահմանված ձևից:

Մաս 1

Երկշերտ համակարգը

Հոդված 39

1. Կառավարման մարմինը պատասխանատու է եվրոպական ընկերության կառավարման համար: Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ գլխավոր տնօրենը կամ գլխավոր տնօրենները պատասխանատու են ընթացիկ կառավարման համար նույն պայմաններով, ինչ այն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների դեպքում, որոնց գտնվելու վայրը տվյալ անդամ պետության տարածքում է:

2. Կառավարման մարմնի անդամը կամ անդամները նշանակվում կամ ազատվում են պաշտոնից վերահսկիչ մարմնի կողմից:

Այդուհանդերձ, անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլատրել, որպեսզի կանոնադրությամբ սահմանվի, որ կառավարման մարմնի անդամը կամ անդամները նշանակվում կամ ազատվում են պաշտոնից ընդհանուր ժողովի կողմից՝ նույն պայմաններով, ինչ այն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների դեպքում, որոնց գտնվելու վայրը տվյալ անդամ պետության տարածքում է:

3. Նույն անձը միաժամանակ չի կարող լինել եվրոպական ընկերության կառավարման և վերահսկիչ մարմնի անդամ: Վերահսկիչ մարմինը կարող է, թափուր պաշտոնի առկայության դեպքում, իր անդամներից մեկի թեկնածությունն առաջարկել որպես կառավարման մարմնի անդամի պաշտոնակատար: Այդ ժամանակահատվածում տվյալ անձի՝ որպես վերահսկիչ մարմնի անդամի պարտականությունների կատարումը կասեցվում է: Անդամ պետությունն այդ ժամանակահատվածի համար կարող է ժամկետային սահմանափակումներ կիրառել:

4. Կառավարման մարմնի անդամների թիվը կամ այն որոշելու կանոնները սահմանվում են եվրոպական ընկերության կանոնադրությամբ: Այդուհանդերձ, անդամ պետությունը կարող է սահմանել անդամների նվազագույն և (կամ) առավելագույն թիվը:

5. Անդամ պետությունը, որում երկշերտ համակարգ նախատեսված չէ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների համար, որոնց գտնվելու վայրը իր տարածքում է, կարող է եվրոպական ընկերությունների վերաբերյալ համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Հոդված 40

1. Վերահսկիչ մարմինը վերահսկում է կառավարման մարմնի աշխատանքը: Այն չի կարող իրականացնել եվրոպական ընկերությունը կառավարելու լիազորություն:
2. Վերահսկիչ մարմնի անդամները նշանակվում են ընդհանուր ժողովի կողմից: Այդուհանդերձ, առաջին վերահսկիչ մարմնի անդամները կարող են նշանակվել կանոնադրությամբ: Այս ընթացակարգը կիրառվում է՝ չսահմանափակելով 47(4) հոդվածի գործողությունը կամ 2001/86/ԵՀ հրահանգով սահմանված՝ աշխատողների մասնակցության որևէ ընթացակարգի կիրառում:
3. Վերահսկիչ մարմնի անդամների թիվը կամ այն որոշելու կանոնները սահմանվում են եվրոպական ընկերության կանոնադրությամբ: Անդամ պետությունն իր տարածքում գրանցված եվրոպական ընկերության համար կարող է, այդուհանդերձ, սահմանել վերջինիս վերահսկիչ մարմնի անդամների թիվը կամ դրանց նվազագույն և (կամ) առավելագույն թիվը:

Հոդված 41

1. Կառավարման մարմինը վերահսկիչ մարմնին առնվազն երեք ամիսը մեկ զեկուցում է եվրոպական ընկերության գործունեության առաջընթացի և կանխատեսվող զարգացման մասին:
2. Բացի 1-ին պարբերությունում նշված տեղեկությունների կանոնավոր տրամադրման՝ կառավարման մարմինը վերահսկիչ մարմնին անմիջապես տեղեկացնում է այն իրադարձությունների մասին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ եվրոպական ընկերության վրա:
3. Վերահսկիչ մարմինը կարող է կառավարման մարմնից պահանջել ցանկացած տեսակի տեղեկություն, որը նրան անհրաժեշտ է 40(1) հոդվածի համաձայն վերահսկողություն իրականացնելու համար: Անդամ պետությունը կարող է սահմանել, որ պահանջելու՝ վերը նշված իրավունքը տարածվի նաև վերահսկիչ մարմնի յուրաքանչյուր անդամի վրա:
4. Վերահսկիչ մարմինը կարող է նախաձեռնել կամ կազմակերպել իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ ցանկացած հետաքննություն:
5. Վերահսկիչ մարմնի յուրաքանչյուր անդամ իրավասու է քննելու վերահսկիչ մարմնին ներկայացված ամբողջ տեղեկատվությունը:

Հոդված 42

Վերահսկիչ մարմնին իր անդամներից ընտրում է նախագահ: Եթե անդամների կեսը նշանակվում է աշխատողների կողմից, ապա միայն բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նշանակված անդամը կարող է նախագահ ընտրվել:

Մաս 2

Միաշերտ համակարգը

Հոդված 43

1. Վարչական մարմինը կառավարում է եվրոպական ընկերությունը: Անդամ պետությունը կարող է նախատեսել, որ գլխավոր տնօրենը կամ գլխավոր տնօրենները պատասխանատու լինեն ընկերության ընթացիկ կառավարման համար նույն պայմաններով, ինչ այն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության դեպքում, որի գտնվելու վայրն այդ անդամ պետության տարածքում է:

2. Վարչական մարմնի անդամների թիվը կամ այդ թիվը որոշելու կանոնները սահմանվում են եվրոպական ընկերության կանոնադրությամբ: Այդուհանդերձ, անդամ պետությունը կարող է սահմանել անդամների նվազագույն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առավելագույն թիվը:

Վարչական մարմինը, սակայն, պետք է կազմված լինի առնվազն երեք անդամից, եթե աշխատողների մասնակցությունը կարգավորվում է 2001/86/ԵՀ հրահանգի համաձայն:

3. Վարչական մարմնի անդամը կամ անդամները նշանակվում են ընդհանուր ժողովի կողմից: Այդուհանդերձ, առաջին վարչական մարմնի անդամները կարող են նշանակվել կանոնադրությամբ: Այս ընթացակարգը կիրառվում է՝ չսահմանափակելով 47(4) հոդվածի գործողությունը կամ 2001/86/ԵՀ հրահանգով սահմանված աշխատողների մասնակցության որևէ կիրառում:

4. Անդամ պետությունը, որում երկշերտ համակարգ նախատեսված չէ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների համար, որոնց գտնվելու վայրը իր տարածքում է, կարող է եվրոպական ընկերությունների վերաբերյալ համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Հոդված 44

1. Եվրոպական ընկերության գործունեության առաջընթացն ու կանխատեսվող զարգացումը քննարկելու նպատակով վարչական մարմինը հանդիպում է առնվազն երեք ամիսը մեկ կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ:

2. Վարչական մարմնի յուրաքանչյուր անդամ իրավասու է քննելու մարմնին ներկայացված ամբողջ տեղեկատվությունը:

Հոդված 45

Վարչական մարմինը նախագահ է ընտրում իր անդամներից: Եթե անդամների կեսը նշանակվում է աշխատողների կողմից, ապա միայն բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից նշանակված անդամը կարող է նախագահ ընտրվել:

Մաս 3

Միաշերտ և երկշերտ համակարգերին բնորոշ կանոնները

Հոդված 46

1. Ընկերության մարմինների անդամները նշանակվում են կանոնադրությամբ սահմանված ժամկետով, որը չի կարող գերազանցել վեց տարին:

2. Կանոնադրությամբ նախատեսված սահմանափակումների պահպանմամբ՝ անդամները կարող են 1-ին պարբերությամբ սահմանված ժամկետով վերանշանակվել մեկ կամ ավելի անգամ:

Հոդված 47

1. Եվրոպական ընկերության կանոնադրությունը կարող է թույլ տալ ընկերությանը կամ այլ իրավաբանական անձի լինել իր մարմիններից մեկի անդամ, եթե այն անդամ պետության սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ կիրառվող իրավունքի նորմերը, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է, այլ բան չեն նախատեսում:

Այդ ընկերությունը կամ այլ իրավաբանական անձը նշանակում է ֆիզիկական անձի՝ տվյալ մարմնում իր գործառույթներն իրականացնելու նպատակով:

2. Առաջին պարբերության իմաստով եվրոպական ընկերության որևէ մարմնի անդամ կամ անդամի ներկայացուցիչ չի կարող լինել այն անձը, որը

ա) զրկվել է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների, որոնց գործունեությունը կարգավորվում է անդամ պետության իրավունքով, համապատասխան մարմնում պաշտոնավարելու իրավունքից՝ համաձայն եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետության իրավունքի կամ

բ) զրկվել է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների, որոնց գործունեությունը կարգավորվում է անդամ պետության իրավունքով, համապատասխան մարմնում պաշտոնավարելու իրավունքից՝ անդամ պետության դատական կամ վարչական մարմնի որոշման համաձայն:

3. Եվրոպական ընկերության կանոնադրությունը կարող է բաժնետերերին ներկայացնող անդամների պաշտոնական պիտանիության հատուկ պայմաններ սահմանել՝ համաձայն այն անդամ պետության սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ կիրառվող իրավունքի նորմերի, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է:
4. Սույն Կանոնակարգը չի ազդում փոքրամասնություն կազմող բաժնետերերի կամ այլ անձանց կամ մարմինների կողմից ընկերության մարմնի որոշ անդամներ նշանակելու իրավունք վերապահող ներպետական իրավունքի նորմերի վրա:

Հոդված 48

1. Եվրոպական ընկերության կանոնադրությունը սահմանում է այն գործարքների տեսակները, որոնց կնքման համար անհրաժեշտ է կառավարման մարմնի լիազորումը վերահսկիչ մարմնի կողմից՝ երկշերտ համակարգի դեպքում կամ վարչական մարմնի հստակ որոշումը՝ միաշերտ համակարգի դեպքում:

Անդամ պետությունը կարող է, այդուհանդերձ, նախատեսել, որ երկշերտ համակարգի դեպքում վերահսկիչ մարմինը կարող է ինքը սահմանել հաստատման ենթակա գործարքների որոշ տեսակներ:

2. Անդամ պետությունը կարող է որոշել գործարքների տեսակները, որոնք պետք է առնվազն նշվեն իր տարածքում գրանցված եվրոպական ընկերության կանոնադրությունում:

Հոդված 49

Եվրոպական ընկերության մարմինների անդամները պարտավոր են, անգամ պաշտոնավարման ավարտից հետո, չբացահայտել եվրոպական ընկերության վերաբերյալ որևէ տեղեկություն, որի բացահայտումը կարող է վնասել ընկերության շահերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բացահայտումը պահանջվում կամ թույլ է տրվում սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ կիրառվող ներպետական դրույթներով կամ բխում է հանրային շահերից:

Հոդված 50

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով կամ կանոնադրությամբ, եվրոպական ընկերության մարմիններում քվորումներին և որոշումների կայացմանը վերաբերող ներքին կանոնները հետևյալն են՝

ա) քվորում՝ անդամների առնվազն կեսը պետք է ներկա կամ ներկայացված լինի.

բ) որոշումների կայացում՝ անհրաժեշտ է անդամների մեծամասնության ներկայությունը կամ ներկայացվածությունը:

2. Կանոնադրության մեջ համապատասխան դրույթի բացակայության դեպքում յուրաքանչյուր մարմնի նախագահի ձայնը որոշիչ է հավասար բաշխված ձայների դեպքում: Այդուհանդերձ, կանոնադրությամբ հակառակը սահմանող դրույթ չի նախատեսվում, եթե վերահսկիչ մարմնի անդամների կեսը աշխատողների ներկայացուցիչներ են:

3. Եթե, 2001/86/ԵՀ հրահանգի համաձայն, սահմանվում է աշխատողների մասնակցություն, անդամ պետությունը կարող է նախատեսել, որ վերահսկիչ մարմնի քվորումը և որոշումների կայացումը ենթակա է տվյալ անդամ պետության իրավունքի համաձայն գործող սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ նույն պայմաններով կիրառվող կանոններին՝ շեղում կատարելով 1–ին և 2–րդ պարբերություններով սահմանված դրույթներից:

Հոդված 51

Համաձայն այն անդամ պետության սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության նկատմամբ կիրառվող դրույթների, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է, վերջինիս կառավարման, վերահսկիչ և վարչական մարմնի անդամները պատասխանատու են եվրոպական ընկերության կողմից կրած կորստի կամ վնասի համար, որ առաջացել է իրենց պարտականություններից բխող իրավական, կանոնադրական կամ այլ պարտականությունների խախտման հետևանքով:

Մաս 4

Ընդհանուր ժողովը

Հոդված 52

Ընդհանուր ժողովը որոշումներ է կայացնում այն հարցերի շուրջ, որոնց համար նրան բացառիկ պատասխանատվություն է վերապահված՝

ա) սույն Կանոնակարգով կամ

բ) 2001/86/ԵՀ հրահանգի կիրարկման նպատակով եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետությունում ընդունված օրենսդրությամբ:

Բացի այդ, ընդհանուր ժողովը որոշում է կայացնում այն հարցերի շուրջ, որոնց համար անդամ պետության իրավունքով կամ, այդ իրավունքին համապատասխան, եվրոպական ընկերության կանոնադրությամբ պատասխանատվություն է վերապահված այն անդամ պետության իրավունքի համաձայն գործող սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության ընդհանուր ժողովին, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է:

Հոդված 53

Չսահմանափակելով սույն մասում սահմանված կանոնների գործողությունը՝ ընդհանուր ժողովների կազմակերպումն ու անցկացումը, ինչպես նաև քվեարկությունը կարգավորվում են այն անդամ պետության սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության նկատմամբ կիրառվող իրավունքով, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է:

Հոդված 54

1. Եվրոպական ընկերությունը ընդհանուր ժողով է գումարում տարեկան առնվազն մեկ անգամ՝ ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում, եթե եվրոպական ընկերության գործունեությանը նման գործունեություն իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ կիրառվող անդամ պետության իրավունքը, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է, չի նախատեսում ընդհանուր ժողովի ավելի հաճախակի գումարում: Այդուհանդերձ, անդամ պետությունը կարող է սահմանել, որ առաջին ընդհանուր ժողովը կարող է գումարվել եվրոպական ընկերության գրանցմանը հաջորդող 18 ամիսների ընթացքում ցանկացած ժամանակ:

2. Ընդհանուր ժողովները կարող են գումարվել կառավարման, վարչական, վերահսկիչ մարմնի կամ որևէ այլ իրավասու մարմնի կողմից ցանկացած ժամանակ՝ այն անդամ պետության սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության նկատմամբ կիրառվող ներպետական իրավունքի համաձայն, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է:

Հոդված 55

1. Մեկ կամ ավելի բաժնետերեր, որոնք միասին հանդիսանում են եվրոպական ընկերության տեղաբաշխված կապիտալի առնվազն 10 տոկոսի սեփականատեր, կարող են պահանջել, որպեսզի եվրոպական ընկերությունն ընդհանուր ժողով հրավիրի և կազմի դրա օրակարգը. եվրոպական ընկերության կանոնադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ կարող է ավելի փոքր համամասնություն սահմանվել՝ նույն պայմաններով, որոնք կիրառվում են սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ:

2. Ընդհանուր ժողովի գումարման մասին պահանջում շարադրվում են օրակարգում ներառվելիք հարցերը:

3. Եթե 1-ին պարբերությունով սահմանված պահանջից հետո ընդհանուր ժողովը չի գումարվում նախատեսված ժամկետում և, որևէ պատճառով, երկու ամսվա ընթացքում, ապա իրավասու դատական կամ վարչական մարմինը, որի իրավասության ներքո գտնվող տարածքում գտնվում է եվրոպական ընկերության գտնվելու վայրը, կարող է կարգադրել, որ ընդհանուր ժողովն անցկացվի համապատասխան ժամկետում կամ լիազորել դրա անցկացումը պահանջող մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին գումարել ընդհանուր ժողով: Սա չի

հակասում այն ներպետական դրույթներին, որոնք թույլ են տալիս բաժնետերերին ընդհանուր ժողով գումարել:

Հոդված 56

Մեկ կամ ավելի բաժնետերերը, որոնք միասին եվրոպական ընկերության տեղաբաշխված կապիտալի առնվազն 10 տոկոսի սեփականատերերն են, կարող են պահանջել, որ ցանկացած ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկվեն մեկ կամ ավելի լրացուցիչ հարցեր: Նման պահանջներ ներկայացնելու կարգը և ժամկետները սահմանվում են եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետության ներպետական իրավունքի նորմերով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ եվրոպական ընկերության կանոնադրությամբ: Եվրոպական ընկերության կանոնադրությամբ կամ այն անդամ պետության իրավունքով, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է, կարող է ավելի փոքր համամասնություն սահմանվել՝ նույն պայմաններով, որոնք կիրառվում են սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության դեպքում:

Հոդված 57

Բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Կանոնակարգը կամ, հակառակ դեպքում, այն անդամ պետության սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ կիրառվող իրավունքը, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է, պահանջում է, որ ընդհանուր ժողովում որոշումները կայացվեն առավել ծանրակշիռ մեծամասնությամբ, ընդհանուր ժողովի որոշումները կայացվում են վավեր քվեների մեծամասնությամբ:

Հոդված 58

Տրված ձայները չեն ներառում այն բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքից բխող քվեները, որոնց վերաբերյալ քվեարկությունում բաժնետերը չի մասնակցել կամ ձեռնպահ է մնացել, կամ վերադարձրել է չլրացված կամ անվավեր քվեաթերթիկ:

Հոդված 59

1. Եվրոպական ընկերության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու համար անհրաժեշտ է ընդհանուր ժողովի՝ ձայների երկու երրորդից ոչ պակաս մեծամասնությամբ կայացված որոշումը՝ բացառությամբ, երբ այն անդամ պետության սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ կիրառվող իրավունքը, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է, պահանջում կամ թույլատրում է ավելի խոշոր մեծամասնություն:

2. Անդամ պետությունը կարող է նախատեսել, որ եվրոպական ընկերության տեղաբաշխված կապիտալի առնվազն կեսը ներկայացնող քվեարկողների ներկայության դեպքում առաջին պարբերությունում նշված ձայների պարզ մեծամասնությունը բավարար է:

3. Եվրոպական ընկերության կանոնադրությունում կատարվող փոփոխությունները հրապարակվում են 13-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 60

1. Եթե եվրոպական ընկերությունն ունի երկու կամ ավելի դասի բաժնետոմսեր, ապա ընդհանուր ժողովի կողմից կայացված յուրաքանչյուր որոշում ենթակա է առանձին քվեարկության՝ յուրաքանչյուր դասի բաժնետոմսերի սեփականատերերի կողմից, որոնց՝ բաժնետոմսերի դասից բխող իրավունքները շոշափվում են տվյալ որոշմամբ:

2. Եթե ընդհանուր ժողովի կողմից ընդունված որևէ որոշման համար պահանջվում է 59(1) կամ (2) հոդվածով նախատեսված ձայների մեծամասնություն, ապա համանման մեծամասնություն անհրաժեշտ է նաև յուրաքանչյուր այն դասի բաժնետոմսերի սեփականատերերի առանձին քվեարկության դեպքում, որոնց՝ բաժնետոմսերի դասից բխող իրավունքները շոշափվում են այդ որոշմամբ:

ԲԱԺԻՆ IV

ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 61

62-րդ հոդվածի դրույթների պահպանմամբ՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների և, հարկ եղած դեպքում, համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման, ինչպես նաև հարակից տարեկան զեկույցի, այդ հաշվետվությունների աուդիտի և հրապարակման մասով եվրոպական ընկերության գործունեությունը կարգավորվում է դրա գտնվելու վայրի անդամ պետության սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ կիրառվող նորմերով:

Հոդված 62

1. Վարկային կամ ֆինանսական հաստատություն հանդիսացող եվրոպական ընկերության՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների և, հարկ եղած դեպքում, համախմբված

ֆինանսական հաշվետվությունների կազմման, ինչպես նաև հարակից տարեկան զեկույցի, այդ հաշվետվությունների աուդիտի և հրապարակման մասով գործունեությունը կարգավորվում է դրա գտնվելու վայրի անդամ պետության ներպետական իրավունքի այն կանոններով, որոնք սահմանվել են ի կատարումն վարկային հաստատությունների գործունեության նախաձեռնման և իրականացման մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի մարտի 20–ի 2000/12/ԵՀ հրահանգի:⁽⁹⁾

2. Ապահովագրական ընկերություն հանդիսացող եվրոպական ընկերության՝ տարեկան ֆինանսական, և, հարկ եղած դեպքում, համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման, ինչպես նաև հարակից տարեկան զեկույցի, այդ հաշվետվությունների աուդիտի և հրապարակման մասով գործունեությունը կարգավորվում է դրա գտնվելու վայրի անդամ պետության ներպետական իրավունքի այն կանոններով, որոնք սահմանվել են ի կատարումն «Ապահովագրական կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների և համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 19–ի 91/674/ԵՏՀ հրահանգի:⁽¹⁰⁾

ԲԱԺԻՆ V

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Հոդված 63

Եվրոպական ընկերության գործունեության դադարման, լուծարման, սնանկության, վճարումների դադարեցման և նմանատիպ ընթացակարգերը կարգավորվում են դրա գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով ստեղծված սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության նկատմամբ կիրառվող դրույթներով՝ ներառյալ ընդհանուր ժողովի որոշումների կայացմանը վերաբերող դրույթները:

Հոդված 64

1. Երբ եվրոպական ընկերությունն այլևս չի բավարարում 7–րդ հոդվածով սահմանված պահանջներին, դրա գտնվելու վայրի անդամ պետությունը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում, որպեսզի պարտավորեցնի եվրոպական ընկերությանը սահմանված ժամկետում կարգավորելու իր գտնվելու վայրի կամ գլխավոր գրասենյակի հետ կապված հարցերը՝

ա) վերահիմնելով իր գլխավոր գրասենյակը այն անդամ պետությունում, որտեղ դրա գտնվելու վայրն է կամ

բ) 8–րդ հոդվածով սահմանված կարգով տեղափոխելով իր գտնվելու վայրը:

2. Եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ, որոնք ապահովում են 1-ին պարբերությամբ սահմանված կարգով իր դիրքը չկարգավորող եվրոպական ընկերության լուծարումը:

3. Եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետությունը, 7-րդ հոդվածի խախտման հաստատման դեպքում սահմանում է դատական պաշտպանության միջոց: Պաշտպանության այդ միջոցը կասեցնում է առաջին և երկրորդ պարբերություններով սահմանված ընթացակարգերը:

4. Եթե իշխանությունների կամ որևէ շահագրգիռ կողմի նախաձեռնությամբ հաստատվում է, որ եվրոպական ընկերության գլխավոր գրասենյակը, 7-րդ հոդվածի խախտմամբ, գտնվում է որևէ անդամ պետության տարածքում, ապա այդ անդամ պետության իշխանություններն այդ մասին անմիջապես տեղեկացնում են եվրոպական ընկերության գտնվելու վայրի անդամ պետությանը:

Հոդված 65

Չսահմանափակելով հավելյալ հրապարակում պահանջող ներպետական իրավունքի դրույթների գործողությունը՝ գործունեության դադարման, լուծարման, սնանկության կամ վճարումների դադարեցման ընթացակարգերը սկսելու և դադարեցնելու, ինչպես նաև գործունեությունը շարունակելու մասին կայացված որևէ որոշման հրապարակումն իրականացվում է 13-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 66

1. Եվրոպական ընկերությունը կարող է վերափոխվել սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության, որի գործունեությունը կարգավորվում է իր գտնվելու վայրի անդամ պետության իրավունքով: Վերափոխման մասին որոշում չի կարող կայացվել ընկերության գրանցումից հետո երկու տարվա ընթացքում և մինչև տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին երկու փաթեթների հաստատումը:

2. Եվրոպական ընկերության վերափոխումը սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության չի հանգեցնում ընկերության գործունեության դադարմանը կամ նոր իրավաբանական անձի ստեղծմանը:

3. Եվրոպական ընկերության կառավարման կամ վարչական մարմինը կազմում է վերափոխման նախնական պայմանները, ինչպես նաև վերափոխման իրավական և տնտեսական կողմերը բացատրող ու հիմնավորող և բաժնետերերի ու աշխատողների համար սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության ձևի ընկերություն դառնալուց բխող հետևանքները նկարագրող զեկույց:

4. Վերափոխման նախնական պայմանները հրապարակվում են այդ մասին որոշում կայացնելու նպատակով ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ՝ յուրաքանչյուր անդամ պետության իրավունքով սահմանված կարգով՝ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին համապատասխան:

5. 6-րդ պարբերությամբ նախատեսված ընդհանուր ժողովի գումարումից առաջ մեկ կամ ավելի անկախ փորձագետները, որոնք, համաձայն 78/855/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածի իրականացման նպատակով ընդունված ներպետական դրույթների, նշանակվել կամ հաստատվել են այն անդամ պետության դատական կամ վարչական մարմնի կողմից, որի իրավասության ներքո է գտնվում սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության վերափոխվող եվրոպական ընկերությունը, հավաստում են, որ սվյալ ընկերությունն ունի առնվազն իր կապիտալին համարժեք ակտիվներ:

6. Եվրոպական ընկերության ընդհանուր ժողովը հաստատում է վերափոխման նախնական պայմանները՝ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության կանոնադրության հետ միասին: Ընդհանուր ժողովի որոշումը կայացվում է 78/855/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածի իրականացման նպատակով ընդունված ներպետական իրավունքի դրույթների համաձայն:

ԲԱԺԻՆ VI

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 67

1. Եթե և քանի դեռ տնտեսական և արժույթային միության (EMU) երրորդ փուլը չի կիրառվում իր նկատմամբ, յուրաքանչյուր անդամ պետություն կարող է իր տարածքում գտնվելու վայր ունեցող եվրոպական ընկերության նկատմամբ կիրառել կապիտալի դրամական արտահայտմանը վերաբերող նույն դրույթները, որոնք կիրառվում են իր օրենսդրությամբ կարգավորվող սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների նկատմամբ: Եվրոպական ընկերությունն ամեն դեպքում կարող է իր կապիտալն արտահայտել նաև եվրոյով: Այդ դեպքում ազգային արժույթ-եվրո փոխարժեքը սահմանվում է եվրոպական ընկերության ստեղծման նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ:

2. Եթե և քանի դեռ տնտեսական և արժույթային միության երրորդ փուլը չի կիրառվում այն անդամ պետության նկատմամբ, որտեղ եվրոպական ընկերության գտնվելու վայրն է, եվրոպական ընկերությունը կարող է, այնուամենայնիվ, պատրաստել և հրապարակել իր տարեկան ֆինանսական, և հարկ եղած դեպքում, համախմբված ֆինանսական հաշվետվությունները՝ արտահայտված եվրոյով: Անդամ պետությունը կարող է պահանջել, որ եվրոպական ընկերության տարեկան ֆինանսական և, հարկ եղած դեպքում, համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվեն և հրապարակվեն ազգային արժույթով՝ նույն պայմաններով, ինչ այդ անդամ պետության իրավունքի համաձայն գործող սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների դեպքում: Դա չի սահմանափակում եվրոյով արտահայտված տարեկան ֆինանսական և, հարկ եղած դեպքում, համախմբված ֆինանսական հաշվետվություններ հրապարակելու հավելյալ հնարավորությունը՝ «Տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին» 78/60/ԵՏՀ հրահանգը փոփոխող Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 8-ի 90/604/ԵՏՀ հրահանգի և «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» 83/349/ԵՏՀ հրահանգի՝ փոքր ու միջին ձեռնարկությունների արտոնությունների և եվրոպական արժույթային միավորով (ecu) արտահայտված հրապարակմանը վերաբերող դրույթների համաձայն:⁽¹¹⁾

ԲԱԺԻՆ VII
ԵԶՐԱՓՍԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 68

1. Անդամ պետությունը սահմանում է այնպիսի դրույթներ, որոնք անհրաժեշտ են սույն Կանոնակարգի արդյունավետ կիրառումն ապահովելու համար:
2. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է իրավասու մարմիններին՝ 8-րդ, 25-րդ, 26-րդ, 54-րդ, 55-րդ և 64-րդ հոդվածների իմաստով: Այն այդ մասին տեղեկացնում է համապատասխանաբար Հանձնաժողովին և մյուս անդամ պետություններին:

Հոդված 69

Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահից ամենաուշը հինգ տարի անց, Հանձնաժողովը Խորհրդին և Եվրոպական պառլամենտին է ուղարկում Կանոնակարգի կիրառման և, հարկ եղած դեպքում, փոփոխություններ կատարելու առաջարկների վերաբերյալ զեկույց: Զեկույցում, մասնավորապես, վերլուծվում է հետևյալ հարցերի նպատակահարմարությունը՝

- ա) թույլատրել եվրոպական ընկերության գլխավոր գրասենյակի և գտնվելու վայրի հիմնումը տարբեր անդամ պետություններում.
- բ) ընդլայնել միաձուլում հասկացությունը 17(2) հոդվածում՝ 78/855/ԵՏՀ հրահանգի 3(1) և 4(1) հոդվածներում սահմանված տեսակներից բացի միաձուլման այլ տեսակներ թույլատրելու նպատակով.
- գ) վերանայել 8(16) հոդվածի՝ իրավասությանը վերաբերող դրույթը՝ 1968 թվականի Բրյուսելի կոնվենցիայում կամ այդ կոնվենցիան փոփոխելու նպատակով անդամ պետության կամ Խորհրդի կողմից ընդունված ցանկացած տեքստի մեջ որևէ դրույթի ներառման կապակցությամբ.
- դ) թույլատրել եվրոպական ընկերության կանոնադրության մեջ սույն Կանոնակարգով անդամ պետություններին տրված իրավասությունների կամ սույն Կանոնակարգի արդյունավետ կիրառման համար ընդունված օրենքների կիրարկման նպատակով սովյալ անդամ պետության կողմից ընդունված դրույթների ներառումը, որոնք շեղվում են այդ օրենքներից կամ լրացնում են դրանց, եթե անգամ այդ դրույթների ներառումն այն սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերության կանոնադրության մեջ, որի գտնվելու վայրը այդ անդամ պետությունում է, չի թույլատրվում:

Հոդված 70

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հոկտեմբերի 8-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և կիրառվում է ուղղակիորեն:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 2001 թվականի հոկտեմբերի 8-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Լ. Օնկելինքս

(1) ՊՏ C 263, 16.10.1989թ., էջ 41 և ՊՏ C 176, 8.07.1991թ., էջ 1:

(2) 2001թ. սեպտեմբերի 4-ին ներկայացված եզրակացություն (պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել)

(3) ՊՏ C 124, 21.05.1990թ., էջ 34:

(4) Տե՛ս այս պաշտոնական տեղեկագրի 22-րդ էջը:

(5) ՊՏ L 395, 30.12.1989թ., էջ 40:

Հրահանգը՝ վերջին անգամ փոփոխված 1994թ. Անդամակցության մասին ակտով:

(6) ՊՏ L 65, 14.03.1968թ., էջ 8:

Հրահանգը՝ վերջին անգամ փոփոխված 1994թ. Անդամակցության մասին ակտով:

(7) ՊՏ L 295, 20.10.1978թ., էջ 36:

Հրահանգը՝ վերջին անգամ փոփոխված 1994թ. Անդամակցության մասին ակտով:

(8) Խորհրդի 1976 թվականի դեկտեմբերի 13-ի 77/91/ԵՏՀ Երկրորդ հրահանգ

«Մահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների ստեղծման և դրանց կապիտալի պահպանման ու դրա չափի փոփոխման հետ կապված՝ Պայմանագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով ընկերություններից՝ մասնակիցների և այլոց շահերի պաշտպանության համար անդամ պետությունների կողմից պահանջվող երաշխիքների համաձայնեցման մասին, որը նպատակ է հետապնդում նման երաշխիքները համարժեք դարձնել» (ՊՏ L 26, 31.01.1977, էջ 1):

Հրահանգը՝ վերջին անգամ փոփոխված 1994թ. Անդամակցության մասին ակտով:

(9) ՊՏ L 126, 26.05.2000թ., էջ 1:

(10) ՊՏ L 374, 31.12.1991թ., էջ 7:

(11) ՊՏ L 317, 16.11.1990թ., էջ 57:

ՀԱՎԵԼՎԱԾ I

2(1) ՀՈՂՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲԱՑ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԵԼԳԻԱ՝

la société anonyme / de naamloze vennootschap,

[▼M2](#)

ԲՈՒԼԴԱՐԻԱ՝

акционерно дружество

[▼M1](#)

ՉԵՂԻԱՅԻ ԻԱՆԸՄԵՆՏՈՒԹՅՈՒՆ՝

akciová společnost

ԴԱՆԻԱ՝

aktieselskaber,

ԳԵՐՄԱՆԻԱ՝

die Aktiengesellschaft,

[▼M1](#)

ԷՍՏՈՆԻԱ՝

aktsiaselts

ՀՈՒՆԱՍՏԱՆ՝

ανώνυμη εταιρία,

ԻՍՊԱՆԻԱ՝

la sociedad anónima,

ՖՐԱՆՍԻԱ՝

la société anonyme,

ԻՌԼԱՆԴԻԱ՝

public companies limited by shares,

public companies limited by guarantee having a share capital,

ԻՏԱԼԻԱ՝

società per azioni,

[▼M1](#)

ԿԻՊՐՈՍ:

Δημόσια Εταιρεία περιορισμένης ευθύνης με μετοχές, Δημόσια Εταιρεία περιορισμένης ευθύνης με εγγύηση

ԼՍՏՎԻԱ:

akciju sabiedrība

ԼԻՏՎԱ:

akcinės bendrovės

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ՝

la société anonyme,

[▼M1](#)

ՀՈՒՆԳԱՐԻԱ՝

részvénytársaság

ՄԱԼԹԱ՝

kumpaniji pubbliċi / public limited liability companies

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ՝

de naamloze vennootschap,

ԱՎՍՏՐԻԱ՝

die Aktiengesellschaft,

[▼M1](#)

ԼԵՀԱՍՍԱՆ:

spółka akcyjna

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ՝

a sociedade anónima de responsabilidade limitada,

[▼M2](#)

ՌՈՒՄԻՆԻԱ:

societate pe acțiuni

[▼M1](#)

ՍԼՈՎԵՆԻԱ:

delniška družba

ՍԼՈՎԱԿԻԱ:

akciová spoločnosť

ՖԻՆԼԱՆԴԻԱ՝

julkinen osakeyhtiö//publikt aktiebolag,

ՇՎԵԴԻԱ՝

publikt aktiebolag,

ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝

public companies limited by shares,

public companies limited by guarantee having a share capital.

ՀԱՎԵԼՎԱԾ II

2(2) ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲԱՑ ԵՎ ՓԱԿ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԵԼԳԻԱ՝

la société anonyme / de naamloze vennootschap,

la société privée à responsabilité limitée//besloten vennootschap met beperkte aansprakelijkheid,

[▼M2](#)

ԲՈՒԼԴԱՐԻԱ՝

акционерно дружество, дружество с ограничена отговорност

[▼M1](#)

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ՝

akciová společnost,

společnost s ručením omezeným

ԴԱՆԻԱ՝

aktieselskaber,

anpartselskaber,

ԳԵՐՄԱՆԻԱ՝

die Aktiengesellschaft,

die Gesellschaft mit beschränkter Haftung,

[▼M1](#)

ԷՍՏՈՆԻԱ՝

aktsiaselts ja osühing

ՀՈՒՆԱՍՏԱՆ՝

ανώνυμη εταιρία,

εταιρία περιορισμένης ευθύνης ,

ԻՍՊԱՆԻԱ՝

la sociedad anónima,

la sociedad de responsabilidad limitada,

ՖՐԱՆՍԻԱ՝

la société anonyme,

la société à responsabilité limitée,

ԻՌԼԱՆԴԻԱ՝

public companies limited by shares,

public companies limited by guarantee having a share capital,

private companies limited by shares,

private companies limited by guarantee having a share capital.

ԻՏԱԼԻԱ՝

società per azioni,

società a responsabilità limitata,

[▼M1](#)

ՎԻՊԴՈՍ՝

Δημόσια εταιρεία περιορισμένης ευθύνης με μετοχές,

δημόσια Εταιρεία περιορισμένης ευθύνης με εγγύηση,

ιδιωτική εταιρεία

ԼՍՏՎԻԱ՝

akciju sabiedrība,

un sabiedrība ar ierobežotu atbildību

ԼԻՏՎԱ՝

akcinės bendrovės,

uždarosios akcinės bendrovės

[▼B](#)

LUXEMBOURG:

la société anonyme,

la société à responsabilité limitée

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ`

la société anonyme,

la société à responsabilité limitée,

[▼M1](#)

ՀՈՒՆԳԱՐԻԱ`

részvénytársaság,

korlátolt felelősségű társaság

ՄԱԼԹԱ`

kumpaniji pubbliċi / public limited liability companies

kumpaniji privati/private limited liability companies

ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ`

de naamloze vennootschap,

de besloten vennootschap met beperkte aansprakelijkheid,

ԱՎՍՏՐԻԱ`

die Aktiengesellschaft,

die Gesellschaft mit beschränkter Haftung,

[▼M1](#)

ԼԵՉԱՍՏԱ`

spółka akcyjna,

spółka z ograniczoną odpowiedzialnością

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ՝

a sociedade anónima de responsabilidade limitada,

a sociedade por quotas de responsabilidade limitada,

[▼M2](#)

ՌՈՒՄԻՆԻԱ՝

societate pe acțiuni, societate cu răspundere limitată

[▼M1](#)

ՍԼՈՎԵՆԻԱ՝

delniška družba,

družba z omejeno odgovornostjo

ՍԼՈՎԱԿԻԱ՝

akciová spoločnosť,

spoločnosť s ručením obmedzeným

ՖԻՆԼԱՆԴԻԱ՝

osakeyhtiö,

aktiebolag,

ՇՎԵԴԻԱ՝

aktiebolag,

ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝

public companies limited by shares,

public companies limited by guarantee having a share capital,

private companies limited by shares,

private companies limited by guarantee having a share capital.